Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Strong CSOs for Stronger Armenia

ngo center

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց



Երևան
2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՆԱԽԱԲԱՆ	4-5
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	4-5
Գլուխ 1. Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի իրավական հիմքերը, ինստիտուցիոնալ մարմինների գործառույթները	6-8
1.1. Նախարարին կից հասարակական խորհուրդը	6
1.2. Իրավական ակտերի նախագծերի հրապարակման e-draft.am միասնական պաշտոնական կայքը	7-8
1.3. ՀՀ Ազգային Ժողովի օրինաստեղծ գործընթացում հանրության մասնակցությունը	8
Գլուխ 2. Հայաստանում քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական կառավարման մոդելի մոնիթորինգի արդյունքները 2018թ. հուլիսի դրությամբ և դրանց համադրումը 2017-ի արդյունքների հետ	9-14
2.1. Նախարարին կից հասաարակական խորհուրդները	9-12
2.2. Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը	12-14
2.3. ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում ՔՀԿ-ների մասնակցությունը	14
Գլուխ 3. Մոնիթորինգի արդյունքների ամփոփում, վերլուծություն, եզրակացություններ, առաջարկություններ	15-20
3.1. Նախարարին կից հասարակական խորհրդները	15-19
3.2. Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքը	19
3.3. ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում խորհրդարանական լսումները, հանրային քննարկումները	19
3.4. ՔՀԿ-ների զարգացման դինակիկան	19-20
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	20
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	
Հավելված 1. ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդների 2016, 2017, 2018թթ. գործունեության վերաբերյալ վիճակագրական տվյալները	21-25
Հավելված 2. ԱԺ Աշպատակզմի նամակը ՞Արազա՞ ԲՀԿ-ին	26-27
Հավելված 3. ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐՑԱՇԱՐ	28-31
Հավելված 4. ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	32-35
Հավելված 5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	37
Հավելված 6. ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԱՌՎԵԼԻՔ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ	37

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱԺ	Ազգային ժողով
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԳԾ	Գործողությունների ծրագիր

Ն Ե Ր Ա Ծ Ու Թ Յ Ու Ն

Ներկայացվող ուսումնասիրությունն իրականացրել է «Արազա» ԲՀԿ-ն Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» (“STRONG CSOs”) ծրագրի շրջանակներում «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի հետ համատեղ «Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդել» ծրագրի շրջանակներում:

Ուսումնասիրության նպատակն էր մոնիթորինգի միջոցով գնահատել կառավարության Բաց կառավարման գործընկերության (այսուհետ ԲԿԳ) երկրորդ գործողությունների պլանով ստանձնած «Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում» հանձնառության շրջանայներում Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման նորարարական մոդելի արդյունավետությունը 2018-ի դրությամբ 2017թ մոնիթորինգի արդյունքում բացահայտված խոչընդոտների հաղթահարման տեսանկյունից:

Ինչպես և 2017-ին ուսումնասիրության թիրախ են հանդիսացել ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդները, իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքը և ՀՀ Ազգային Ժողովի խորհրդարանական լսումների և հանրային քննարկումների ինստիտուտը:

Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի գնահատման հիմք է հանդիսացել տեղեկատվությունը հետևյալի մասին.

- նախարարին կից հասարակական խորհուրդների ձևավորման ընթացակարգ, օրակարգի ձևավորման գործընթացում խորհրդի կազմում ընդգրկված ՀԿ-ների մասնակցություն, խորհուրդների գործունեության թափանցիկություն և հաշվետվողականություն,
- իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքի 2018 թ-ի հուլիսի դրությամբ բաժանորդներ, այցելուներ, հանրային առաջարկներ, ամփոփաթերթեր, նախարարությունների կողմից տեղադրված իրավական ակտեր,
- Ազգային ժողովի խորհրդարանական լսումների և դրանցում ՔՀԿ-ների մասնակցություն:

Մոնիթորինգն իրականացվել է համացանցում պաշտոնական կայքերից, համապատասխան մարմիններին հղված պաշտոնական գրությունների պատասխաններից հավաքագրված հավաստի տվյալների ուսումնասիրության և նախարարին կից հասարակական խորհուրդների անդամների և համակարգողների/քարտուղարների շրջանում հարցման միջոցով:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա գնահատվել է Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի կիրառման գործում արձանագրված առաջընթացը: Համապատասխան զեկույցը առաջարկությունների փաթեթով ներկայացվելու է կառավարությաը՝ մասնավորապես, մոդելի կառավարման պատասխանատու ՀՀ Արդարադատության նախարարությանը, ՀՀ Ազգային ժողովին, քաղաքացիական հասարակությանը և “STRONG CSOs” ծրագրի ղեկավարությանը:

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետությունը 2011-ի նոյեմբերին[1] միացել է Բաց Կառավարման Գործընկերություն կամավոր միջազգային նախաձեռնությանը, որի նպատակն է քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավման միջոցով ապահովել կառավարման համակարգի բարելավումը՝ խթանելով վերջինիս հաշվետվողականությանը, արդյունավետությանը, պետություն-քաղաքացի հարաբերությունների թափանցիկությանը և վստահելիությանը:

ԲԿԳ-Հայաստան երկրորդ գործողությունների պլանի (2014-2016) 7-րդ կետով կառավարությունը ստանձնել էր «Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում» և 8-րդ կետով՝ «Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում» հանձնառությունները, որոնց համաձայն Հայաստանում ձևավորվել է քաղաքականության մշակման միասնական մասնակցային կառավարման համակարգված մոդել/հարթակ:

Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի շրջանակներում «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ն և «Արազա» ԲՀԿ-ն նախաձեռնել են «Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդել»-ի արդյունավետության գնահատմանն ուղղված նախագիծ՝ հենվելով գործող կանոնակարգերի, իրական գործընթացների, արձանագրած ձեռքբերումների, առկա դժվարությունների ու դրանց հաղթահարման հնարավորությունների վերաբերյալ հանրության և շահագրգիռ պետական կառույցների կարծիքի և դիրքորոշման ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի առկա վիճակի ուսումնասիրությունը իրականացվել է պետական մարմինների և ՔՀԿ-ների ներգրավմամբ մասնակցային մոնիթորինգի գործիքի կիրառմամբ: Դա թույլ է տվել հետևել կառավարության որոշումների և քաղաքականության իրականացման գործընթացին, չափել դրանց արդյունավետությունը, և՝ արդյունքներն ամփոփելով, կապ հաստատել համապատասխան որոշումներ կայացնող պաշտոնատար անձանց հետ քննարկելու համար արված բացահայտումները և նախանշելու առկա խնդիրների լուծմանն ուղղված հնարավոր քայլերը:

Մոնիթորինգի շրջանակներում իրականացվել է նախարարին կից հասարակական խորհուրդների անդամների և համակարգողների/քարտուղարների ներկայացուցիչների շրջանում հարցում, ստացված արդյունքների ամփոփում և վերլուծություն, միասնական կառավարման մոդելը կարգավորող իրավական դաշտի, պաշտոնական գրությունների, իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքի ուսումնասիրություն:

Մոնիթորինգի միջոցով հավաքագրվող տվյալների թիրախների ընտրությունը համաձայնեցվել է Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի ներդրման գործընթացը համակարգող ՀՀ Արդարադատության նախարարության հետ:

Առցանց եղանակով պետական մարմինների կայքերից և պաշտոնական գրություններով հավաքագրվել և ուսումնասիրվել են՝

- ✓ ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի նիստի N 52 արձանագրային որոշմամբ հաստատված «ՀՀ նախարարին կից հասարակական խորհրդի օրինակելի աշխատակարգ»-ը,
- ✓ ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի նիստի N 2 արձանագրային որոշմամբ հաստատված «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույց»-ը,
- ✓ ՀՀ Ազգային Ժողովի կանոնակարգ-օրենքը,
- ✓ ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդների տեղեկատվական ռեսուրսները,

[1] ՀՀ Բաց Կառավարման Գործընկերություն պաշտոնական կայք http://www.opengovpartnership.org/country/armenia

- ✓ ՀՀ արդարադատության նախարարության Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքը:

ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդների վերաբերյալ նախարարությունների կայքերից և համապատասխան մարմիններից հավաքագրված պաշտոնական տեղեկատվության հիման վրա ուսումնասիրվել են.

a) խորհուրդների ձևավորման ընթացակարգը և ժամանակացույցը,
b) խորհուրդների կազմում ընդգրկված ոլորտային ՀԿ-ների թիվը,
c) խորհուրդների օրակարգի ձևավորման ընթացքում ՔՀԿ-ների մասնակցությունը,
d) խորհուրդների վերակազմավորման ռոտացիոն կարգը,
e) խորհուրդների հաշվետվողականությունը,
f) 2017թ նոյեմբերին «Արազա» ԲՀԿ-ի իրականացրած մոնիթորինգի զեկույցում տեղ գտած առաջարկությունների ճակատագիրը:

Նախարարությունների հետ պաշտոնապես համաձայնեցվել և իրականացվել է նախարարին կից հասարակական խորհուրդների նիստերի դիտորդություն: Դիտորդության ընթացքում հարցազրույցներ են տեղի ունեցել խորհրդների գործունեությունը համակարգող համակարգողների/քարտուղարների, հանրային կապերի բաժինների պատասխանատուների և խորհրդների անդամների հետ, կազմվել են արձանագրություններ նիստերի հրավիրման և վարման ընթացակարգերի մասին:

Նախարարին կից հասարակական խորհուրդների անդամների և համակարգողների/քարտուղարների ներկայացուցիչների շրջանում հատուկ մշակված և համապատասխան մարմինների հետ համաձայնեցված հարցաշարի միջոցով իրականացվել է հարցում:

ՀՀ արդարադատության նախարարության Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքի մոնիթորինգի արդյունքում ձեռք է բերվել տեղեկատվություն հետևյալի մասին.

a) օգտատերերի թիվը,
b) այցելուների թիվը,
c) գրանցման ակտիվությունն ամսվա ընթացքում,
d) տեղադրված նախագծերը,
e) ակտիվ նախագծերի թիվը,
f) առավել ակտիվ նախարարությունները:

Մոնիթորինգի է ենթարկվել ՀՀ Ազգային Ժողովի խորհրդարանական լսումների և դրանց մասնակցած ՔՀԿ-ների թվի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը (տես Հավելված 2):

Պաշտոնական կայքերում անհրաժեշտ տեղեկատվության պակասը լրացնելու նպատակով գրություններ են հղվել համապատասխան պետական կառույցներին, իրականացվել են հեռախոսազանգեր լրատվության և հանրային կապերի պատասխանատու պաշտոնյաներին, տեղի են ունեցել հարցազրույցներ և հանդիպումներ:

«Բաց տարածք» ձևաչափով՝ «Հանուն մասնակցային և արդյունավետ կառավարման» խորագրով խորհրդաժողովի ընթացքում իրականացվել է «Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի արդյունավետությունը» թեմատիկ քննարկում:

Հավաքագրված հավաստի տեղեկատվության վերլուծության արդյունքներից բխող եզրակացությունների հիման վրա մշակվել է Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի՝ երկխոսության հարթակների, կայացմանն ու զարգացմանը ուղղված առաջարկությունների փաթեթ:

Գլուխ 1. Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի իրավական հիմքերը, ինստիտուցիոնալ մարմինների գործառույթները

1.1. Նախարարին կից հասարակական խորհուրդը

2015թ-ի նոյեմբերի 26-ի Կառավարության N 52 արձանագրային որոշմամբ հաստատվել է «ՀՀ նախարարին կից հասարակական խորհրդի օրինակելի աշխատակարգին հավանություն տալու մասին» որոշումը, որի համաձայն 2016թ-ի մայիսից ձևավորվել և գործել են նախարարին կից հասարակական խորհուրդները:

Հիշյալ որոշման համաձայն ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդը խորհրդատվական մարմին է, որը աջակցում է նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների առավել արդյունավետ իրականացմանը՝ ներկայացնելով առաջարկություններ և դիտողություններ նախարարության կողմից վարվող ընդհանուր քաղաքականության առավել արդյունավետ իրականացման վերաբերյալ, հասարակական կազմակերպությունների կամ այլ շահագրգիռ անձանց մասնակցությամբ քննարկում է հասարակության տարբեր շերտերի կարծիքներն ու տեսակետները նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման վերաբերյալ, ներկայացնում է առաջարկություններ և դիտողություններ՝նախարարության կողմից շրջանառվող իրավական ակտերի, հայեցակարգերի, ռազմավարությունների և ծրագրերի նախագծերի վերաբերյալ և աջակցում է հանրային քննարկումներին, նախարարության կողմից ձեռնարկվող բարեփոխումների, ընդհանուր քաղաքականության ուղղությունների, ինչպես նաև նախարարության կողմից իրականացվող աշխատանքների առաջնահերթությունների վերաբերյալ, նախարարության ընթացիկ գործունեության, նախարարության առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող գործակալությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ և կարող է բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ ընդունել խորհրդատվական բնույթի որոշումներ:

Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում նաև արտահերթ: Խորհրդի նիստերը հրավիրվում և օրակարգը ձևավորվում է խորհրդի նախագահի՝ նախարարի, կամ խորհրդի անդամների կազմի 1/3-ի նախաձեռնությամբ:

2018թ հուլիսի դրությամբ ձևավորվել և գործում են 13 նախարարին կից հասարակական խորհուրդներ, որոնցում ՔՀԿ-ներն ունեն քաղաքականությունների և իրավական ակտերի մշակման գործընթացին իրապես ներգրավվելու հնարավորություն: 2018թ-ի մայիսից հաստատված աշխատակարգի համաձայն սկսվել է նախարարին կից հասարակական խորհուրդների անդամների ռոտացիայի գործընթացը և 2018թ-ի հուլիսի դրությամբ վերակազմավորվել են 5 նախարարին կից հասարակական խորհուրդներ,

Ստորև թվարկած 5 նախարարություններում խորհուրդներն առ այսօր չեն ձևավորվել հետևյալ պատճառներով.

1. ՀՀ Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն: Համաձայն բանավոր պատասխանի պատճառը նախարարության ձևավորման և գործառույթների հստակեցման գործընթացում գտնվելն է և կառավարության նոր կազմի ձևավորումը:
2. ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն: Համաձայն բանավոր պատասխանի պատճառը կառավարության նոր կազմի ձևավորումն է և ոլորտում գործող փորձառու ՀԿ-ների պակասը:
3. ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը: Պաշտոնական գրության համաձայն 2017թ մայիսի 18-ի N499 որոշումը սահմանափակում է 2015թ-ի նոյեմբերի 26-ի Կառավարության N 52 նախարարին կից հասարակական խորհրդի ձևավորման մասին արձանագրային որոշման կատարումը:
4. ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն: Համաձայն պաշտոնական գրության դիմորդների թիվը չի ապահովում խորհրդի անդամների թվի համար սահմանված նվազագույն շեմը:
5. ՀՀ Ֆինանսների նախարարություն: Համաձայն պաշտոնական գրության դիմորդների թիվը չի ապահովում խորհրդի անդամների թվի համար սահմանված նվազագույն շեմը:

1.2. Իրավական ակտերի նախագծերի հրապարակման e-draft.am միասնական պաշտոնական կայքը

Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման e-draft.am միասնական պաշտոնական կայքը Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկման և հանրային քննարկման հնարավորություն է: Այն թույլ է տալիս ծանոթանալ նախագծերին մինչև դրանց ընդունումը, ներկայացնել առաջարկներ պատասխանատու գերատեսչություններին, ինչպես նաև ներդրում ունենալ դրանց լրամշակման գործում:

Իրավական ակտերի հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի մշակման կանոնները ամրագրվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցին հավանություն տալու մասին» N2 արձանագրային որոշմամբ, իսկ ՀՀ արդարադատության նախարարությունը՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ, մշակել է իրավական ակտերի մասին հանրության իրազեկման կանոնակարգը: Պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման e-draft.am միասնական պաշտոնական կայքը գործարկվել է 2016թ. դեկտեմբերից և շահագործվում է 2017թ-ից և մշակված կանոնակարգի համաձայն հանրային քննարկման ընթացքում ներկայացված առաջարկները ներառվում են ամփոփաթերթում պաշտոնական մեկնաբանությամբ՝ ընդունվել է, չի ընդունվել ինչ մեկնաբանությամբ, խմբագրվել է ինչպես:

Կայքն ունի պարզ կառուցվածք, գրանցվելու և բաժանորդագրվելու ռեժիմներ ինչպես կազմակերպությունների, այնպես էլ անհատների համար, կայքից օգտվելու ուղղեցույց-տեսահոլովակ: Այն տալիս է նախագծի համառոտ և ամբողջական բովանդակությանը ծանոթանալու, դրա օգտին, կամ դեմ քվեարկելու, առաջարկներ և տեսակետներ ներկայացնելու, նախագծի հեղինակին հարց ուղղելու և պարզաբանումներ ստանալու հնարավորություն[2]: Ներկայացված բովանդակային առաջարկներն պարտադիր եղանակով ներառվում են ամփոփաթերթում:

Կայքն ունի օգտատերերի՝ նախարարությունների, բաժանորդների և այցելուների հաշվառման ինքնաշխատ ռեժիմ[3] (տես՝ Գծապատկեր 1,2):

Գծապատկեր 1



[2] e_draft.am կայքի գլխավոր էջ, https://www.e-draft.am/
[3] e_draft.am կայքի վիճակագրություն բաժին; https://www.e-draft.am/statistics



2018թ հունիսի 22-ից հուլիսի 7-ը e_draft.am միասնական պաշտոնական կայքում քննարկման է դրվել «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը:

2018թ-ի հուլիսի դրությամբ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքի մշտադիտարկման թիրախն են եղել հետևյալ բնութագրական տվյալները [4].

1. օգտատերերի թիվը,
2. այցելուների թիվը,
3. գրանցման ակտիվությունն ամսվա ընթացքում,
4. առավել ակտիվ նախարարությունների թիվը,
5. տեղադրված նախագծերի թիվը,
6. առավել ակտիվ քննարկված նախագծերի թիվը:

1.3. ՀՀ Ազգային Ժողովի օրինաստեղծ գործընթացում հանրության մասնակցությունը

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության իրավական հիմքերը սահմանված են ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ-օրենքի հոդված 12-ի մաս 5-ում և հոդված 14-ի մաս 4-ում:

Հոդված 12-ի մաս 5-ի համաձայն «մշտական հանձնաժողովը կարող է հրավիրել խորհրդարանական լսումներ», իսկ հոդվածի 14-ի մաս 4-ի համաձայն «Մշտական հանձնաժողովի նիստերը հրապարակային են» և նախապես գրանցվելու միջոցով դրանց կարող են մասնակցել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Մշտական հանձնաժողովի փակ նիստն անցկացվում է Կանոնակարգի 88-րդ հոդվածի 6-րդ , 93-րդ հոդվածի 2-րդ և 117-րդ հոդվածի 6-րդ մասերով սահմանված դեպքերում»:

2018թ-ի հունիսից ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքում, մշտական հանձնաժողովների էջերում ստեղծվել է առանձնացված բաժին, որում տեղադրվում է լիարժեք և ամբողջական տեղեկատվություն խորհրդարանական լսումների մասին և որը պարունակում է խորհրդարանական լսումների մասին հայտարարությունները, օրակարգը, քննարկվող նյութերը և լսումների ամփոփող արձանագրությունները:

[4] https://www.e-draft.am/statistics

Գլուխ 2. Հայաստանում քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական կառավարման մոդելի մոնիթորինգի արդյունքները 2018թ. հուլիսի դրությամբ և դրանց համադրումը 2017-ի արդյունքների հետ

Մոնիթորինգի ընթացքում հավաքագրված հավաստի տվյալների ուսումնասիրությունը ցույց տվեց, թե որքանով է մոդելը ֆորմալ առումով երաշխավորում քաղաքականության մշակման գործընթացին հանրային մասնակցայնությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը, բացառում կախվածությունը պետական պաշտոնյաների քաղաքական կամքից, ապահովում որոշումների վրա ազդելու հնարավորությունը և նպաստում հանրային վստահության բարձրացմանը:

Ամփոփելով մոնիթորինգի արդյունքները ակնկալում ենք օգնել քաղաքացիական հասարակությանը և պետական կառուցներին բացահայտել մոդելի հնարավորությունները, խնդիրները, զարգացման հեռանկարը և կողմնորոշել գործընթացին ակտիվ և արդյունավետ ներգրավվելու ուղղությամբ:

2.1. Նախարարին կից հասարակական խորհուրդները

Ստորև ներկայացված են 2018-ին «Արազա» ԲՀԿ-ի իրականացրած մոնիթորինգի արդյունքները նախարարին կից հասարակական խորհուրդների գործունեության, ռոտացիոն կարգով վերակազմավորման, տեղեկատվական ռեսուրսների և հաշվետվողականության վերաբերյալ:

Ուսումնասիրությունն իրականացվել է նախարարին կից հասարակական խորհուրդների վերաբերյալ հետևյալ պաշտոնական տեղեկատվության հիմման վրա.

a) խորհուրդների ձևավորման ընթացակարգը և ժամանակացույցը,
b) խորհուրդների կազմում ընդգրկված ոլորտային ՀԿ-ների թիվը,
c) խորհուրդների օրակարգի ձևավորման ընթացքում ՔՀԿ-ների մասնակցությունը,
d) խորհուրդների ռոտացիոն կարգով վերաձևավորումը,
e) խորհուրդների հաշվետվողականությունը,
f) 2017թ նոյեմբերին «Արազա» ԲՀԿ-ի իրականացրած մոնիթորինգի զեկույցի առաջարկությունների ճակատագիրը:

Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ 2018թ. հուլիսի 31-ի դրությամբ 13 նախարարություններում շարունակում են գործել նախարարին կից հասարակական խորհուրդները: Չորս նախարարություններում (Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների, Արտակարգ իրավիճակների, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, Ֆինանսների) նախարարին կից հասարակական խորհուրդները հետևյալ պատճառներով դեռ ձևավորված չեն.

- ✓ Աշխատակարգով սահմանված ոլորտում գործունեության բավարար փորձառություն ունեցող դիմորդների թվաքանակի պակաս:
- ✓ Անցած 2 տարիների ընթացքում կառավարության և/կամ նախարարների հաճախակի փոփոխություն:

ՀՀ Արտակարգ իրավիճակների, ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, ՀՀ Ֆինանսների նախարարություններն օգոստոս ամսվա ընթացքում իրենց պաշտոնական կայքերում նոր հայտարարություն տեղադրել խորհրդի ձևավավորման հրավերով: Իսկ Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության հետ այդ խնդրով կապ հաստատել չի հաջողվել:

Նախարարին կից հասարակական խորհրդի գործունեությունը/նիստերը

Ստորև բերված են նախարարին կից հասարակական խորհրդների 2018թ գործունեության մասին տվյալները (Գծապատկեր 3):

Գծապատկերից երևում է, որ ձևավորված խորհուրդներից ոչ բոլորն են պահպանել աշխատակարգով սահմանած նիստեր գումարելու ժամանակացույցը, իսկ ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարին կից հասարակական խորհուրդն ընթանրապես նիստ չի հրավիրել, այսինքն ֆորմալ մարմին է:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ Գյուղատնտեսության, ՀՀ Կրթության և գիտության նախարարությունները ի տարբերություն մյուսների մշակել են և հանրայնացրել հասարակական խորհրդի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները:

Տարեկան հաշվետվություններ չներկայացնելը նախարարությունները պայմանավորում են Կարգում տեղ գտած հետևյալ անորոշություններով.

- ✓ հստակեցված չէ «տարեկան հաշվետվություն» սահմանումը, այն պետք է ներառի օրացուցայի՞ն տարվա, թե խորհրդի ձևավորման պահից հաշված մեկ տարվա գործունեությունը,
- ✓ սահմանված չէ «տարեկան հաշվետվության» ձևաչափը,
- ✓ հստակեցված չէ, թե «տարեկան հաշվետվության» մեջ արտացոլվելու է խորհրդի անդամների՞, թե նաև նախարարության գործունեությանը,
- ✓ նշված չէ տարեկան հաշվետվության մշակման համար պատասխանատու անձը,
- ✓ սահմանված չէ հաշվետվության նախագծի մշակմանը խորհրդի անդամների մասնակցության կարգը:

Գծապատկեր 3

Նախարարին կից հասարակական խորհրդի 2018թ. գործունեությունը/նիստերը



ՀՀ Բնապահպանության, ՀՀ Կրթության և գիտության, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ Պաշտպանության, ՀՀ Մշակույթի, ՀՀ Առողջապահության նախարարությունների հասարակական խորհուրդները ռոտացիոն կարգով վերակազմավորվել են սահմանված ընթացակարգից և ժամանակացույցից աննշան շեղումներով:

ՀՀ Սպորտի և երիտասարդության և ՀՀ Սփյուռքի նախարարությունների հասարակական խորհուրդները ներկայումս գտնվում են ռոտացիոն կարգով վերակազմավորման գործընթացում:

Բացառությամբ ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, մյուս նախարարությունները հասարակական խորհուրդների վերակազմավորումը՝ խորհրդի ձևավորման պահից 2 տարի ժամկետը լրացած չլինելու պատճառով, կամ կառավարության փոփոխությամբ պայմանավորված, նախատեսում են իրականացնել առաջիկա 3 ամիսների ընթացքում:

Նախարարին կից հասարակական խորհուրդների գործունեության մասին անդամների և համակարգողների/քարտուղարների հարցման արդյունքները

Հարցումն իրականացվել է 2018 թ-ի հուլիս-օգոստոս ամիսներին: Նպատակն էր հասարակական խորհուրդների անդամների և համակարգողների/քարտուղարների տեսանկյունից գնահատել ավելի քան երկու տարի գործող այս մասնակցային հարթակի ձևավորման ընթացակարգը, օրակարգի ձևավորման գործընթացում ՀԿ-ների մասնակցությունը, գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը և արդյունավետությունը: Հատուկ մշակված հարցաշարը կից ներկայացված է Հավելված 3-ում:

Հարցման իրականացումը նախապես համաձայնեցվել է խորհուրդները ձևավորած բոլոր նախարարությունների հետ: ՀՀ Պաշտպանության, ՀՀ Սփյուռքի, ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունները հրաժարվել են մասնակցել հարցմանը հետևյալ պատճառաբանությամբ.

- ՀՀ Պաշտպանության և ՀՀ Սփյուռքի նախարարությունները գտնվում են վերակազմավորման փուլում և իրենց մասմակցությունը նպատակահարմար չեն գտնում:
- ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարին կից հասարակական խորհուրդը գործունեություն չի ծավալել, նիստեր չի հրավիրել, ուստի չի կարոս օբյեկտիվ գնահատել:

Այսպիսով, հարցման թիրախում են հայտնվել հասարակական խորհուրդների 37 անդամ և 10 համակարգողներ/քարտուղարներ: Հասարակական խորհուրդների 37 անդամներից խորհրդում 2-ից ավելի տարվա աշխատանքի փորձ ունեին 19-ը, 10 համակարգողներից/քարտուղարներից՝ 6-ը:

Հասարակական խորհուրդների հարցման մասնակից անդամների **գերակշռող մեծամասնությունը՝ 29-ը, բարձր են գնահատել մասնակցային հարթակի կարևորությունը,** մինչդեռ 8-ը գտնում են, որ այն զուտ ֆորմակ մարմին է:

Հարցման մասնակից խորհուրդների 37 անդամներից 15-ը բավարարված չեն իրենց ունեցած ազդեցությամբ, և 11-ը որպես պաբճառ նշել են **«Ունեցած իրավասություններից ոչ բավարար չափով օգտվելը»:**

Հարցման մասնակից հասարակական խորհուրդների 37 անդամներից 33-ը, թեև որպես հիմնական գործառույթ նշում են «Քննարկվող նախագծերի վերաբերյալ առաջարկներ ներկայացնելը», սակայն միայն 14-ն են հարմար գտնում դրանց ներկայացման եղանակը: Հարցման մասնակից 23 խորհուրդների անդամների կարծիքով **առաջարկները պետք է նախապես գրավոր տեսքով հասանելի լինեն նիստի բոլոր մասնակիցների համար:**

Նիստերի զումարումն ուշացնելու հիմնական պատճառների թվում 27 խորհրդի անդամներ և 7 համակարգողներ/քարտուղարներ նշել են **«Խորհրդի անդամների պասիվությունը» և «Քննարկվող նախագծերի վերաբերյալ վաղաժամ արձագանքի բացակայությունը»:**

Խորհուրդների 37 անդամներից 25-ը հարց են ներրկայացրել նիստի օրակարգում ընդգրկելու համար, դրանցից 19-ը առաջարկ ընդունվել է, 6-ը՝ ոչ:

Խորհուրդների 37 անդամներից իրենց ներկայացրած **առաջարկների ազդեցությունը տեսանելի են համարում ընդամանը 9-ը,** 17-ի կարծիքով դրանք ընդամանը արձանագրվում են, 2-ը նշում են, որ **առաջարկները նույնիսկ չեն ներառվում ամփոփոթերթերում**, իսկ 16-ը դժգոհում են, որ **չեն տեղեկացվում իրենց առաջարկների ճակատագրի մասին:**

Խորհուրդների 10 համակարգողներից/քարտուղարներից 6-ի կարծիքով անդամների ներկայացրած առաջարկների ազդեցությունը տեսանելի է, իսկ 2-ի կարծիքով՝ բավարար չէ, և դրանք ընդամանը արձանագրվում են:

Խորհուրդների գործունեության ընթացքում առաջացող խնդիրների շարքում նշել են.

- ✓ Նիստերի օրակարգի ձևավորումը՝ անդամներից 11-ը,
  համակարգողներից/քարտուղարներից՝ 3-ը:
- ✓ Օրակարգում ընդգրկված հարցերի մեծ ծավալը, ժամանակի սղությունը՝ անդամներից 25-ը,
  համակարգողներից/քարտուղարներից՝ 5-ը:
- ✓ Աշխատանքային խմբերի ձևավորումը՝ անդամներից 19-ը,
  համակարգողներից/քարտուղարներից՝ 2-ը:
- ✓ Օրակարգի ձևավորումը, արձանագրությունների մշակումը՝ անդամներից 9-ը:
- ✓ Խորհրդի գործունեության տարեկան հաշվետվության մշակումը՝ անդամներից 12-ը,
  համակարգողներից/քարտուղարներից՝ 1-ը:

Աշխատանքային խմբերում ընգրված են եղել նախարարին կից հասարակական խորհուրդների 37 անդամներից ընդամանը 6-ը, որոնցից 4-ի առաջարկներն ընդունվել են նախարարության կողմից:

Նախարարին կից հասարակական խորհուրդների գործունեության **արդյունավետությունը բարձր կամ բավարար են գնահատել հարցման ենթարկված 37 անդամներից 26-ը,** անբավարար՝ 8-ը: **Բավարար կամ անբավարար գնահատականի պատճառները հետևյալն են.**

- ✓ անդամներից 12-ի կարծիքով հարթակի ֆորմալ բնույթը,
- ✓ անդամներից 9-ի կարծիքով իրենց ակտիվության և նախաձեռնողականության պակասը,
- ✓ անդամներից 6-ի կարծիքով գիտելիքների ու կարողությունների պակասը,
- ✓ անդամներից 7-ի կարծիքով իրենք լավ չեն պատկերացնում իրենց իրավասությունների շրջանակը,
- ✓ անդամներից 14-ի կարծիքով բացակայում է նիստերից դուրս համագործակցությունը:

Նախարարին կից հասարակական խորհուրդները **ռոտացիոն կարգով թարմացման մեխանիզմը հարցման 37 մասնակիցներից որպես լավ են գնահատել միայն 7-ը:** Հարցման մասնակիցներից 22-ի կարծիքով այն պետք է վերանայվի, ընդ որում դրանցից 12-ի կարծիքով **խորհրդում մնացող անդամների ընտրությունը պետք է պայմանավորված լինի խորհրդի կազմում իրենց կատարած աշխատանքի արդյունավետությամբ:**

Հասարակական խորհուրդների գործունեության մասին հանրությանը տեղեկացնելու միջոցներին խորհրդի անդամների և համակարգողների/քարտուղարների տված գնահատականները խիստ տարբեր են: **Խորհուրդների անդամների կարծիքով հանրությանը տրամադրվող տեղեկավությունը թերի է և հնացած,** իսկ համակարգողների/քարտուղարների կարծիքով այն, բացառությամբ խորհուրդների տարեկան հաշվետվությունների, բավարար չափով հասանելի է և ժամանակին թարմացվում է:

Հարցման մասնակիցների դիտողություններն ու առաջարկները ներառված են Գլուխ 3-ում:

2.2 Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը

Այս բաժնում ներկայացված են Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի շրջանակում իրավական ակտերի նախագծերի հրապարակման e-draft.am միասնական պաշտոնական կայքի 2018թ-ի մոնիթորինգի արդյունքները և դրանց համադրումը 2017թ-ի մշտադիտարկման արդյունքների հետ: Օգտատերերի համար կայքի ընձեռած հնարավորություններն են ուղղակիորեն, առանց արգելքի և միջնորդության մասնակցել քաղաքականությունների և իրավական ակտերի մշակման գործընթացին, հետևել ներկայացված առաջարկների և տեսակետների հետագա կարգավիճակին, համացանցում քննարկել նախագծի վերաբերյալ հետաքրքրող հարցերը նախագծի հեղինակի հետ:

Կայքի ակտիվությունն ու դրա զարգացման հեռանկարները բացահայտելու համար մոնիթորինգն իրականացվել է 2018թ հուլիսի դրությամբ հետևյալ վիճակագրական ցուցանիշների հիմքով[5,6].

1. օգտատերերի թիվը՝ 41
2. այցելուների թիվը՝ 18.869
3. գրանցման ակտիվությունն ամսվա ընթացքում՝ 47
4. առավել ակտիվ նախարարությունների թիվը՝ 10
5. տեղադրված նախագծերի թիվը 948
6. ակտիվ նախագծերի թիվը 26

Հավաքագրված վիճակագրական ցուցանիշներից կարելի է եզրակացնել, որ.

1. 2018թ կայքի բաժանորդների թիվը տարվա առաջին կիսամյակում 2017թ-ի դեկտեմբերի համեմատությամբ անկում է ունեցել: Ընդ որում, նկատվում է, որ նախագծերի քննարկման ակտիվությունը ուղղակիորեն կապված է ՔՀԿ-ների կողմից իրականացվող քարոզչության հետ:

Դրա օրինակներից են՝

- ➢ «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծի քննարկումը, որի ընթացքում 2018-ի մայիս-հունիս

[5] https://www.e-draft.am/statistics

[6] https://www.e-draft.am/

ամիսներին Հակակոռուպցիոն ցանցը, «Հանրային ցանցը» և Թրասպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի ՀԿ-ն համախմբեցին ոլորտային ՔՀԿ-ներին, պատրաստեցին ու ներկայացրեցին առաջարկներ ու հիշեցումներ հղեցին ցանցի անդամ կազմակերպություններիններին (տես՝ Գծապատկեր 4):

- 2018-ի հուլիսի 17-ից օգոստոսի 1-ը կայքում տեղադրված ՀՀ քրեական օրենսգրքում, «Ձերբակալված և կալանավորված անձայց պահելու մասին» և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի քննարկումը, երբ ՀՀ Արդարադատության նախարարին կից խորհրդի անդամ ՀԿ-ները մոբիլիզացրեցին ոլորտով շահագրգիռ կազմակերպություններին ու իրավաբան փորձագետներին:

Գծապատկեր 4



2. 2018թ-ի ընթացքում իրավական ակտերի միասնական պաշտոնական e-draft.am կայքում առավել մեծ թվով նախագծեր են ներկայացրել ՀՀ Արդարադատության, ՀՀ Ֆինանսների, ՀՀ Բնապահպանության, ՀՀ Գյուղատնտեսության, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները (տես՝ Գծապատկեր 5):

Գծապատկեր 5



3. 2018թ.-ի հունիսից ապահովվում է քննարկման դրված նախագծերի կարգավիճակի մասին տեղեկատվությունը: Հանրային քննարկման արդյունքում լրամշակված նախագծերը տեղադրվում են համապատասխան նախարարությունների պաշտոնական կայք-էջերում:

4. Նկատելի է քաղաքականությունների և իրավական ակտերի հանրային քննարկման համար ձևավորված երկու՝ առցանց և հասարակական խորհրդների հարթակների ՔՀԿ-ների կողմից անհամաչափ օգտագործումը: ՔՀԿ ներկայացուցիչները առավել արդյունավետ են համարում «դեմ առ դեմ» աշխատանքային քննարկումները:

Այդ են վկայում նաև նախարարին կից հասարակական խորհրդի անդամների հարցման ընթացում «Արդյո՞ք խորհրդի անդամները իրենց առաջարկները ներկայացնում են ՀՀ Արդարադատության

նախարարության e-draft.am պաշտոնական կայքում» հարցին տված պատասխանները՝ «Ոչ» են պատասխանել 37 մասնակիցներից 31-ը: «Եթե ոչ, ապա ի՞նչու» հարցի պատասխանները հետևյալն են եղել՝ «դեմ-առ-դեմ» քննարկումը նախընտրում են 19 հարցման մասնակից, «Կայքի օգտատեր չեմ»՝ 12-ը, «Առաջարկների հետագա ճակատագիրը տեսանելի չէ»՝ 5-ը:

2.3. ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում ՔՀԿ-ների մասնակցությունը

2017թ-ի մոնիթորիմգի արդյունքների քննարկման ընթացքում ՀՀ Ազգային ժողովի Հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալը նշեց, որ առաջարկները կընդունվեն ի գիտություն: Եվ, ի ուրախություն մեզ, 2018թ-ին ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ մեր առաջարկության համաձայն 2018թ-ի հունվարից ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմակերպած խորհրդարանական լսումների և հանրային քննարկումների մասին տեղեկատվությունը հասանելի է parliament.am պաշտոնական կայքի «Մշտական հանձնաժողովներ» բաժնում և պարունակում է լիարժեք տեղեկատվություն նիստի օրվա, օրակարգի և դրա արձանագրության մասին: Առկա է նաև արխիվ, սկսած 2018թ հունվարից, որում վարվում է նիստերին մասնակցած ՔՀԿ-ների թվաքանակի հաշվառումը, սակայն այն չի հանրայնացվում (տես Հավելված 2):

Մշտական հանձնաժողովների էջում առայժմ բացակայում են նիստերի օրակարգին վերաբերվող նյութերը, որոնք առկա էին չորրորդ գումարման Ազգային ժողովի ժամանակ:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՔՀԿ-ների համար ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում սահմանված է մասնակցության բաց և թափանցիկ ընթացակարգ: Սակայն դրանց իրացման համար շարունակում է խնդիր մնալ հանրային իրազեկվածության և մասնակցային հմտությունների ցածր մակարդակը:

Չլուծված են մնում հետևյալ խնդիրները.

- ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում ՔՀԿ-ների օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունքը,
- Ազգային ժողովի կանոնակարգ-օրենքը չի նախատեսում մշտական հանձնաժողովների փորձագիտական աշխատակազմի հետ ՔՀԿ-ների ներկայացուցիչների անմիջական համագործակցությունը:

Ծրագրի շրջանակում այս խնդիրների լուծմանն ուղղված բանակցությունների արդյունքում ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություն առ այն, որ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի Լրատվության և հանրության հետ կապերի վարչությունն այսուհետ հանդես է գալու նաև որպես ՀՀ Ազգային ժողովի և ՔՀԿ-ների հետ համագործակցությունը համակարգող պաշտոնական ինստիտուցիոնալ խողովակ, որի շրջանակում՝

1) Ապահովում է ոլորտային ցանցային ՔՀԿ-ների տվյալների բազայի ստեղծումը և տեղեկատվական հոսքերի փոխանակումը,
2) ինքնաշխատ ռեժիմով իրազեկում է ոլորտային ցանցային ՔՀԿ-ներին խորհրդարանական լսումների, հանրային քննարկումների մասին,
3) Ազգային ժողովի պատգամավորների համար ապահոում է ոլորտային ցանցային ՔՀԿ-ների կողմից կազմակերպվող օրենքների նախագծերի քննարկումներին մասնակցելու հրավերի հասանելիությունը,
4) Ապահովում է հասարակական հիմունքներով բաց, թափանցիկ, մրցութային և ռոտացիոն կարգով ոլորտային ցանցային ՔՀԿ-ների ներգրավումը Ազգային ժողովի Փորձաքննության վարչության և մշտական հանձնաժողովների կազմում օրենքների նախագծերի փորձաքննությանը մասնակցելու հնարավորությունը,
5) ՔՀԿ-ներից ստանում և պատգամավորներին հասանելի է դարձնում «Իրավական ակտերի մասին» օրենքի պահանջին համապատասխան օրենքների նախագծերը: Արդյունքում, ՀՀ Սահմանադրության համաձայն հետաքրքրված պատգամավորը կարող է հանդես գալ նման նախագիծը Ազգային ժողովի օրակարգում ընդգրկելու առաջարկով:

Պայամավորվածություն է ձեռք բերվել նաև «Բաց տարածք» քննարկման շրջանակում հավաքագրված օրենսդրական նախաձեռնությունները՝ որպես 5-րդ կետով սահմանված կարգի փորձարկում, հասանելի դարձնել պատգամավորներին:

Գլուխ 3. Մոնիթորինգի արդյունքների ամփոփում, վերլուծություն, եզրակացություններ

Ստորև ներկայացված է Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի զարգացման դինամիկան «Հայաստանում քաղաքականության և իրավական ակտերի մշակման միասնական կառավարման մոդել»-ի գնահատման համար 2017թ-ին «Արազա» ԲՀԿ-ի մոնիթորինգի զեկույցի առաջարկությունների կատարման լույսի ներքո:

Դժվար է վիճարկել քաղաքականության մշակման միասնական ինստիտուցիոնալ համակարգի կարևորությունը բաց, թափանցիկ, հաշվետու մասնակցային կառավարման մշակույթի ձևավորման հարցում: Հավաքագրված տեղեկատվության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ դրա համար ձևավորվել է ֆորմալ առումով եվրոպական երկրների օրինակով գործող ինստիտուցիոնալ համակարգ, ընդ որում, ինչպես «դեմ առ դեմ» աշխատանքային մասնագիտական երկխոսության ու հանրային քննարկումների, այնպես էլ հեռահար/առցանց քննարկումների համար: Համակարգի կայացման և զարգացման հարցում մեծ է պատասխանատու պետական կառույցների և ՔՀԿ-ների ակտիվ ներգրավվածության դերն ու նշանակությունը:

3.1. Նախարարին կից հասարակական խորհրդները

Նախարարին կից հասարակական խորհուրդների վերաբերյալ հավաքագրված հավաստի և պաշտոնական տեղեկատվության վերլուծության արդյունքը հստակ տեսանելի է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Նախարարին կից հասարակական խորհրդի գործունեությունը 2016-2018թթ.

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ / ՆԻՍՏԵՐԻ ԹԻՎ	2016	2017	2018	ԸՆԴԱՄԵՆԸ	ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	ՌՈՏԱՑԻԱ
Աշխատանքի եւ սոցիալական հարցերի	1	3	2	6	Առկա է	
Առողջապահության	2	3	1	6		Ավարտված է
Արդարադատության	2	1	1	4		Ընթացքի մեջ է
Բնապահպանության	3	5	1	9		Ավարտված է
Գյուղատնտեսության	2	1	1	4	Առկա է	
Կրթության և գիտության	1	4	3	8	Առկա է	Ավարտված է
Մշակույթի նախարարություն	2	1		3		Ընթացքի մեջ է
Պաշտպանության						Ավարտված է
Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2	3	2	7		Ընթացքի մեջ է
Սփյուռքի	2	4		6		Ընթացքի մեջ է
Տարածքային կառավարման և զարգացման	3	3	2	8		Ավարտված է
Տնտեսական զարգացման և ներդրումների		1	1	2		Ընթացքի մեջ է
Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների	0	0	0	0		

Աղյուսակից ակնհայտ է, որ.

1) 13 նախարարությունների հասարակական խորհուրդները ձևավորվել են՝ պահպանելով կառավարության որոշմամբ հաստատված թափանցիկ և մրցութային ընթացակարգերը:

2) 2018թ-ին 9 նախարարություններում ռոտացիոն վերակազմավորման գործընթացում ևս ընթացակարգը պահպանվել է: Սակայն, ռոտացիայի ընթացքում նախատեսված վիճակահանությունը խնդիրներ է առաջացրել: Որոշ խորհրդների կազմում վիճակահանության արդյունքում մնացել են պակաս փարձառու և պակաս ակտիվ ՔՀԿ-ներ: Ուստի, այս մեխանիզմը վերանայման կարիք ունի:

3) Չորս նախարարություններում կարգով նախատեսված սահմանափակումների՝ խորհրդի կազմի մինիմալ շեմի համաձայն ոլորտում աշխատելու առնվազը 2 տարվա փորձառությամբ անհրաժեշտ թվով

ՀԿ-ների բացակայության հետևանքով, 2 տարի շարունակ չի հաջողվում ձևավորել նախարարին կից հասարակական խորհուրդները:

4) Նախարարությունների մեծ մասը շարունակում է խախտել նիստեր հրավիրելու ժամանակացույցը՝ երբեմն խորհրդի անդամների պասիվությամբ կամ նոր կառավարության ձևավորման գործընթացով պայմանավորված:

5) Նախարարությունների մեծամասնությունը, բացառությամբ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ Գյուղատնտեսության, ՀՀ Կրթության և գիտության նախարարությունների, չեն մշակել և չեն հանրայնացրել հասարակական խորհուրդների գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները հետևյալ հիմնավորմամբ.

- ✓ հստակեցված չէ «տարեկան հաշվետվություն» սահմանումը, այն պետք է ներառի օրացուցայի՞ն տարվա, թե խորհրդի ձևավորման պահից հաշված մեկ տարվա գործունեությունը,
- ✓ սահմանված չէ «տարեկան հաշվետվության» ձևաչափը,
- ✓ հստակեցված չէ, թե «տարեկան հաշվետվության» մեջ արտացոլվելու է խորհրդի անդամների՞, թե նաև նախարարության գործունեությանը,
- ✓ նշված չէ տարեկան հաշվետվության մշակման համար պատասխանատու անձը,
- ✓ սահմանված չէ հաշվետվության նախագծի մշակմանը խորհրդի անդամների մասնակցության կարգը:

Ուստի ծրագրի շրջանակում մշակվել է հաշվետվության բովանդակային պարտադիր տեղեկատվության չափանիշները (տես Հավելված 5), որում ընդգրկվելիք ժամանակահատված է ճանաչվել խորհրդի ձևավորման պահից հաշված գործունեության մեկ տարին:

6) Բացառությամբ ՀՀ Բնապահպանության, ՀՀ Սպորտի և երիտասարդության, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ Առողջապահության, ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների 6 նախարարությունների, հասրակական խորհուրդների անդամները հանդես չեն եկել նիստ հրավիրելու և օրակարգ ձևավորելու նախաձեռնությամբ: ՔՀԿ-ների նախաձեռնողականության պակասը լրացնելու համար ծրագրի շրջանակներում հասարակական և պետական կառույցների ներկայացուցիչների ներգրավմամբ իրականացվել են իրազեկվածության մակարդակի բարձրացման, մասնակցային կառավարման հմտությունների, փաստերի վրա հիմնված առաջարկների մշակման և հանրային շահերի պաշտպանության քարոզարշավների կազմակերպման հմտությունների զարգացմանն ուղղված քննարկումներ և դասընթացներ:

7) Բացառությամբ ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, այլ նախարարությունների պաշտոնական կայքերում հասարակական խորհուրդների գործունեության շրջանակում հրավիրված նիստերի վերաբերյալ տեղեկատվության հասանելության համար առկա է առանձնացված էջ:

Մեր հարցմանը ի պատասխան ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը տեղեկացրել է, որ հասարակական խորհուրդը չի ձևավորվել, նիստեր չի հրավիրել, հաշվետվություն չի պատրաստել և ռոտացիոն կարգով վերակազմավորման գործընթացի առընչությամբ ոչինչ չի պլանավորել: Այսպիսով, այս խորհուրդը 2 տարի շարունակ անհողդողդ լռությամբ անգործության է մատնված:

8) ՀՀ Բնապահպանության, ՀՀ Արդարադատության, ՀՀ Սպորտի և երիտասարդության նախարարությունների կայքերում կան տեղեկատվության որոշ բացթողումներ, որոնք համալրելու կարիք կա:

9) Տարբեր նախարարություններ որդեգրել են նիստերի արձանագրության տարբեր բովանդակային ձևաչափ:

ՀՀ Առողջապահության նախարարության խորհրդի նիստի արձանագրությունը պարունակում է միայն օրակարգի հարցերի քննարկման համառոտագիրը, ինչը չի ապահովում խորհրդի անդամ ՔՀԿ-ների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, մասնավորապես, եթե քննարկման ընթացքում բարցրաձայնված առաջարկներն ու դիտարկումները չեն վերաբերվում իրավական ակտերին և կամ չեն արձանագրվում ու ներառվում ամփոփաթերթում, կամ վերաբերվում են ընթացիկ հարցապնդումների և դրանց լուծման առաջարկների:

Ուստի, անհրաժեշտ է մշակել և հաստատել նիստերի բովանդակային արձանագրությունների օրինակելի ձևաչափը, որի համար օրինակ կարող են ծառայել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ Կրթության և գիտության, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ Բնապահպանության, ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների արձանագրությունները:

Բացառություն կարող է կազմել ՀՀ Պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի նիստերի արձանագրությունները, որոնք կարող են քննարկվող հարցերի գաղտնիությունը ապահովելու նպատակով լինել համառոտ և պարունակել միայն նիստի հրավիրման ժամանակը, օրակարգը, մասնակիցների ցանկը, զեկուցողների ցանկը և քննարկման համառոտագիրը:

Ծրագրի շրջանակում մշակվում և քննարկման համար առաջարկվում են նախարարին կից նիստերի արձանագրություններում ներառվելիք պարտադիր բովանդակային տեղեկատվության չափանիշները (տես Հավելված 6):

10) «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծում որպես հանրային քննարկման և երկխոսության պաշտոնական հարթակ է դիտարկվել բացառապես միասնական պաշտոնական e-draft.am կայքը:

Անհրաժեշտ է նախարարին կից հասարակական խորհուրդների, ՀՀ Ազգային ժողովի խորհրդարանական լսումների, տեղական ինքնակառավարման մարմինների հանրային քննարկումների, աշխատանքային հանդիպումների հարթակները ևս ճանաչել որպես հանրային քննարկման և երկխոսության պաշտոնական հարթակներ և դրդնց կազմակերպման կարգը ևս ընդգրկել վերոհիշալ իրավական ակտերում: Այս առաջարկը ներկայումս քննարկման փուլում է ինչպես նաև այդ այդ հարթակներում հավաքագրված տեսակետները, դիտարկումներն ու առաջարկները, ևս ամփոփաթերթում ներառելու և պաշտոնական մեկնաբանության հիմնավորումն ապահովելու մասին առաջարկը:

Ինչ վերաբերում է նախարարին կից հասարակական խորհուրդների հարցման արդյունքներին, ապա՝ ամփոփելով դրա արդյունքները, հարկ ենք համարում առանձնացնել հետևյալը:

1. Առաջարկների մասին տեղեկատվության տրամադրման մեխանիզմը չի նախատեսում դրանց խորհրդի անդամների համար նախապես գրավոր տեսքով հասանելիությունը:
2. Նիստերի գումարումն ուշացնելու հիմնական պատճառներից են.
   a) Օրակարգի ձևավորման հարցում խորհրդի անդամների պասիվությունը,
   b) Քննարկվող նախագծերի վերաբերյալ խորհրդի անդամների արձագանքի բացակայությունը:
3. Խորհրդի ազդեցությունը սահմանափակող կարևորագույն գործոններից է անդամների կողմից իրենց իրավասություններից ոչ բավարար չափով օգտվելը:
4. Անդամների ներկայացրած առաջարկների ոչ բավարար ազդեցությունը հետևյալ հանգամանքների հետևանք է.
   a) Դրանք ընդամենը արձանագրվում են, սակայն չեն ներառվում հանրային քննարկման ամփոփաթերթում,
   b) Կանխավ նեղ ոլորտային աշխատանքային խմբերում քննարկումների և միասնական առաջարկների փաթեթի մշակման ռեսուսից ոչ բավարար չափով օգտվելը:
   c) Բացակայում է դրանց հետագա ճակատագրի մասին տեղեկատվությունը:
5. Խորհրդների գործունեության արդյունավետությունը տուժում է հետևյալ հանգամանքների պատճառով.
   a) Նախապես չի տրամադրվում օրայարգում ընդգրկված հարցերի համառոտ բովանդակությունը, դրանց վերաբերյալ խորհրդի անդամների առաջարկները, Խորհրդի անդամները բավարար ակտիվ չեն,
   b) Խորհրդի անդամները նիստին ներկայանում են ոչ բավարար չափով պատրաստված,
   c) Խորհրդի անդամները լավ չեն պատկերացնում իրենց իրավասությունների շրջանակը,
   d) Խորհրդի անդամների միջև նիստերից դուրս համագործակցության բացակայությունը:
6. Խորհրդի գործունեության ընթացքում առաջացող խնդիրների շարքում նշվում են.

a) Օրակարգում ընդգրկված հարցերի մեծ ծավալը և ժամանակի սղությունը,

b) Աշխատանքային խմբերի ձևավորումը և աշխատանքի կազմակերպումը,

c) Արձանագրությունների և տարեկան հաշվետվությունների մշակումը:

7. Խորհրդի տարեկան հաշվետվության մշակման և հանրայնացման ընթացակարգը վերանայելու խնդիր կա:

8. Խորհրդի կազմի թարմացման մեխանիզմը պատք է հաշվի առնի նախորդ կազմում անդամների աշխատանքի արդյունավետությունը:

Հավելված 4-ում բերված են հարցման ընթացքում հասարակական խորուրդների անդամների և համակարգողների/քարտուղարների արված բոլոր դիտողությունները: Իսկ ստորև բերված են մասնակցային հարթակի գործունեության արդյունավետության և հանրային կյանքի վրա ունեցած ազդեցության բարձրացմանն ուղղված հասարակական խորուրդների անդամների առաջարկությունները:

- Խորհրդի նիստերը պետք է գումարվեն հստակ պարբերականությամբ:
- Կարևոր է հստակ կանոնակարգել հասարակական խորհրդի կազմում ընդգրկված անդամների գործառույթները:
- Մարզերից առավել ակտիվ մանակցություն ապահովելու համար կարելի է նախատեսել առցանց մասնակցության տարբերակ:
- Խորհրդի մեկ նիստի շրջանակում հարկավոր է օրակարգը ձևավորել մեկ ոլորտային հարցի շուրջ՝ ներառելով կոնկրետ ոլորտին վերաբերող հարցեր ու խնդիրներ:
- Կարևոր է, որ նիստից առաջ կանոնակարգի համաձայն խորհրդի քարտուղարը էլ.փոստով անդամներին ծանուցի խորհրդի նիստի օրակարգի հարցերի, դրանց համառոտ բովանդակության և խորհրդի անդամների ներկայացրած առաջարկների վերաբերյալ:
- Անհրաժեշտ է փոխել աշխատակարգում ռոտացիայի ընթացակարգը: Խորհրդում մնացող անդամների ընտրությունը պետք է պայմանավորվի 2 տարվա ընթացքում նրանց կատարած աշխատանքի արդյունավետությամբ:
- Ռոտացիայի ընթացակարգի շրջանակում կարելի է նախատեսել տեղեկատվական հանդիպումներ նորընտիր անդամների հետ, որպեսզի վերջիններս լիարժեք պատկերացնեն իրենց կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները:
- Նպատակահարմար է նախատեսել խորհրդի ունկնդրի կարգավիճակ և ընձեռել նիստերին անուղղակի մասնակցության իրավունք: Նրանք հետագայում ավելի պատրաստված կլինեն խորհրդի աշխատանքներին ինտեգրվելու համար:
- Խորհրդի գործունեության տարեկան հաշվետվության համար պետք է սահմանել հստակ ժամանակացույց, պատասխանատու կողմերին և բովանդակային չափանիշները: Այդ չափանիշներից պետք է լինի համառոտ տեղեկատվություն խորհրդի անդամների գործունեության մասին, որպես վերջիններիս գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության գնահատման գործիք:
- Ցանկալի է որ խորհուրդն իր կազմում ունենա գիտատեխնիկական խմբեր:
- Խորհրդի անդամների մոտիվացիայի, պատասխանատվության և ակտիվության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է հաշվետվության մեջ ներկայացնել իրենց դերակատարության մասին տեղեկատվությունը:
- Պետք է ձևավորել անդամի ակտիվության աստիճանի սանդղակ, արդյունքում հնարավորություն կստեղծվի հետեվել անդամի պարտաճանաչությանը և հարկ եղած դեպքում նրան փոխարինել մեկ այլ մասնագետով:
- Անհրաժեշտ է ձևավորել մասնագիտական աշխատանքային խմբեր, որոնք նիստին կներկայացնեն մասնագիտական եզրակացություններ ըստ քննարկող հարցերի առջնահերթության և ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման հրատապության:
- Խորհրդի անդամների առաջարկությունները էլեկտրոնային տարբերակով պետք է տրամադրվեն խորհրդի բոլոր անդամներին:

- Հարթակի ֆորմալ բնույթը բացառելու նպատակով անհրաժեշտ է խորհրդի անդամներին ներգրավել ապագա նիստի օրակարգի ձևավորմանը, որպեսզի նրանք կարողանան հանդես գալ բովանդակային առաջարկություններով:
- Կարևոր է հանրայնացնել և համացանցային տիրույթում հնարավորին չափ մատչելի դարձնել նիստի ժամանակ ընթացող քննարկման սղագրությունը՝ անխտիր ներառելով բոլոր առաջարկությունները, դրանց առնչվող առարկությունները, նշյալների հիմնավորումներն ու հավելյալ արձագանքումները:

3.2 Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը

1. Շարունակվում է հանրային քննարկումների գործընթացում երկու հարթակների անհամաչափ օգտագործումը:

2. 2017թ-ի մոնիթորինգի զեկույցի առաջարկների համաձայն օրենքների նախագծերի ընթացիկ կարգավիճակի և լրամշակված տարբերակի մասին տեղեկատվությունը 2018թ-ի հունիսից տեղադրվում է համապատասխան նախարարության պաշտոնական կայքում:

3. e-draft.am կայքը՝ այլալեզու օգտատերերի համար տեսանելի դարձնելու նպատակով, գործարկվել է նաև անգլերեն և ռուսերեն լեզուներով, սակայն դեռ առանց բովանդակային մասի:

4. Մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հանրային քննարկումների կազմակերպման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Դրանում իրենց առաջարկներով ակտիվ մասնակցություն են ունեցել ՔՀԿ ներկայացուցիչները: Որաշման ընդունումը կնպաստի մասնակցային կառավարման մոդելի հետագա զարգացմանը:

3.3 ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում խորհրդարանական լսումները, հանրային քննարկումները

1. 2017թ մոնիթորինգի զեկույցի առաջարկների համաձայն Ազգային ժողովի պաշտոնական կայքում 2018թ. հունվարից առկա է խորհրդարանական լսումների առանձնացված էջ մշտական հանձնաժողովների բաժնում, ուր տեղադրվում են լսումների մասին հայտարարությունները, դրանց օրակարգը, քննարկվող նյութերը, կայացած լսումների արձանագրությունները: 2018թ հունվարից դրանք նաև արխիվացվում են:

2. 2018թ-ից վարվում է, սակայն չի հանրայնացվում, վիճակագրություն կայացած լսումների և նրանցում ներգրավված ՔՀԿ ներկայացուցիչների վերաբերյալ,

3. ՀՀ Սահմանադրության համաձայն գործում է ՔՀԿ-ների օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունքի սահմանափակումը, իսկ 6-րդ գումարման ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները դադարել են կիրառել 4-րդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների փորձագիտական աշխատակազմում ոլորտային ՔՀԿ-ների փորձագետների ներգրավման փորձը: Այս դրական փորձի շարունակականությունը ապահովելու համար հիմք է կարող դառնալ նոր ինստիտուցիոնալ մեխանիզմի ձևավորումը: Ծրագրի շրջանակում աշխատանքային հանդիպումների և բանակցությունների արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն ՀՀ Ազգային ժողովի Լրատվության և հանրության հետ կապերի վարչության գործառույթները համապատասխան կերպով ընդլայնելու մասին:

3.4 ՔՀԿ-ների զարգացման դինակիկան

1. Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մոտ բարձրացել է իրազեկվածության ու իրավագիտակցության մակարդակը քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի ինստիտուցիոնալ հարթակների, դրանցում իրենց իրավասությունների և դերակատարության մասին;

2. 2018թ-ին նախարարին կից հասարակական խորհուրդների վերաձևավորված կազմում աճել է մարզային ՔՀԿ-ների թիվը;

3. Աշխուժացել է ոլորտային ցանցային ՔՀԿ-ների համագործակցությունը;

4. Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մոտ ցածր է մնում քաղաքականությունների և իրավական ակտերի մշակման, դրանց շուրջ կառուցողական երկխոսության հմտությունների ու փորձառության մակարդակը;

5. Չեն նվազել ոլորտային ցանցերում տնական համագործակցության ռիսկերը;

6. Ցածր է միջոլորտային ցանցային համագործակցության մակարդակը, զարգացած չէ շահերի ներդաշնակեցման նպատակով երկխոսության, պետական կառույցներում միասնական դիրքորոշմամբ հանդես գալու մշակույթը:

Գլուխ 4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս գլխում ի մի են բերված մոնիթորինգի արդյունքից բխող քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի ինստիտուցիոնալ հարթակների արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունները:

Նախ և առաջ անհրաժեշտ է նախարարին կից հասարակական խորհուրդների, ՀՀ Ազգային ժողովի խորհրդարանական լսումների, տեղական ինքնակառավարման մարմինների հանրային քննարկումների, աշխատանքային հանդիպումների հարթակները ճանաչել որպես հանրային քննարկման և երկխոսության պաշտոնական հարթակներ և դրանք ևս ընդգրկել «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծում: Այս առաջարկը ներկայումս քննարկման փուլում է:

Նախարարին կից հասարակական խորհրդներ

Ստորև բերված են այս մասնակցային հարթակի գործունեության արդյունավետության և հանրային կյանքի վրա ունեցած ազդեցության բարձրացմանն ուղղված հասարակական խորուրդների անդամների առաջարկությունները:

- Խորհրդի նիստերը գումարել հստակ պարբերականությամբ:
- Հստակ կանոնակարգել հասարակական խորհրդի կազմում ընդգրկված անդամների գործառույթները:
- Մարզային ՔՀԿ-ների առավել ակտիվ մանակցությունն ապահովելու համար նախատեսել առցանց մասնակցության հնարավորություն:
- Խորհրդի մեկ նիստի օրակարգը ձևավորել մեկ ոլորտային հարցի շուրջ՝ ներառելով կոնկրետ ոլորտին վերաբերող հարցեր ու խնդիրներ:
- Նիստից առաջ էլ.փոստով անդամներին ծանուցել խորհրդի նիստի օրակարգի հարցերի, դրանց համառոտ բովանդակության և խորհրդի անդամների ներկայացրած առաջարկների վերաբերյալ:
- Փոխել խորհրդի վերակազմավորման ռոտացիայի ընթացակարգը: Խորհրդում մնացող անդամների ընտրությունը պայմանավորել 2 տարվա ընթացքում նրանց կատարած աշխատանքի արդյունավետությամբ:
- Ռոտացիայի ընթացակարգի շրջանակում նախատեսել տեղեկատվական հանդիպումներ նորընտիր անդամների հետ, որպեսզի վերջիններս լիարժեք պատկերացնեն իրենց կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները:
- Նախատեսել խորհրդի ունկնդրի կարգավիճակ և ընձեռել նիստերին անուղղակի մասնակցության իրավունք:
- Խորհրդի գործունեության տարեկան հաշվետվության սահմանել հստակ ժամանակացույց, պատասխանատու կողմերին և բովանդակային չափանիշներ: Այդ չափանիշներից պետք է լինի համառոտ տեղեկատվություն խորհրդի անդամների կատարած աշխատանքի մասին, որպես վերջիններիս գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության գնահատման գործիք:
- Խորհուրդն իր կազմում պետք է ունենա գիտատեխնիկական խմբեր:
- Խորհրդի անդամների մոտիվացիայի, պատասխանատվության և ակտիվության մակարդակի բարձրացման համար հաշվետվության մեջ ներկայացնել իրենց դերակատարության մասին տեղեկատվությունը:
- Ձևավորել անդամի ակտիվության աստիճանի սանդղակ, արդյունքում հնարավորություն կստեղծվի հետևել անդամի պարտաճանաչությանը և հարկ եղած դեպքում նրան փոխարինել մեկ այլ մասնագետով:

- Ձևավորել մասնագիտական աշխատանքային խմբեր, որոնք նիստին կներկայացնեն մասնագիտական եզրակացություններ ըստ քննարկող հարցերի առաջնահերթության և ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման հրատապության:
- Հանրայնացնել և համացանցային տիրույթում հնարավորին չափ մատչելի դարձնել նիստի ժամանակ ընթացող քնարկման սղագրությունը՝ անխտիր ներառելով բոլոր առաջարկությունները, դրանց առնչվող առարկությունները, նշյալների հիմնավորումներն ու հավելյալ արձագանքումները:

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը

ՔՀԿ-ների կողմից Քաղաքականությունների և իրավական ակտերի հանրային քննարկման համար e-draft.am պաշտոնական կայքնի օգտագործմանը խթանելու նպատակով մշակել և իրականացնել իրազեկման և համապատասխան հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքային քննարկումներ և դասընթացներ:

ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում խորհրդարանական լսումներ, հանրային քննարկումներ

Հաղթահարելու համար ՀՀ Սահմանադրության համաձայն ՔՀԿ-ների օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունքի արգելքը և ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ-օրենքի համաձայն մշտական հանձնաժողովների փորձագիտական աշխատակազմում ոլորտային ՔՀԿ-ների փորձագետների ներգրավման սահմանափակումը հաղթահարելու նպատակով հետամուտ լինել ՀՀ Ազգային ժողովի Լրատվության և հանրության հետ կապերի վարչության գործառույթները համապատասխան կերպով ընդլայնելու մասին Ծրագրի շրջանակում ձեռք բերված պայմանավորվածության կատարմանը:

ՔՀԿ-ների կարողությունների զարգացումը

1. Մշակել և իրականացնել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մոտ քաղաքականությունների և իրավական ակտերի նախագծերի մշակման, դրանց շուրջ կառուցողական երկխոսություն ծավալելու հմտությունների զարգացմանն ու փորձառության ձեռքբերմանն ուղղված միջոցառումների ծրագրեր:
2. Պետություն-ՔՀԿ-ներ համագործակցության արդյունավետությանը նպաստելու նպատակով խթանել ոլորտային ցանցերի ձևավորմանը և դրանց տևական համագործակցությանը;
3. Բարձրացնել միջոլորտային ցանցային համագործակցության մակարդակը, զարգացնել շահերի ներդաշնակեցման միջոցով, պետական կառույցներում միասնական դիրքորոշմամբ հանդես գալու մշակույթը:

1. Քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի ինստիտուցիոնալ հարթակների, դրանցում իրենց իրավասությունների և դերակատարության մասին ՔՀԿ-ների իրազեկման ու իրավագիտակցության բարձրացման գործընթացը շարունակականության ապահովում:
2. Հասարակական խորհուրդների կազմում մարզային ՔՀԿ-ների առավել ակտիվ մանակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է.
   a) Նախատեսել նիստերի առցանց հեռարձակում,
   b) Նախատեսել նիստերին առցանց մասնակցության հնարավորություն,
   c) Նախատեսել խորհրդի ունկնդրի կարգավիճակ,
   d) Ընձեռել նիստերին անուղղակի մասնակցության հնարավորություն:
   e) Նրանք հետագայում ավելի պատրաստված կլինեն խորհրդի աշխատանքներին ինտեգրվելու համարմ:
3. Միջոլորտային ցանցային համագործակցության մակարդակը, բարձրացնելու և շահերի ներդաշնակեցման նպատակով երկխոսության, պետական կառույցներում միասնական դիրքորոշմամբ հանդես գալու մշակույթը զարգացնելու հարցում կարող են օգտակար լինել նախարարին կից հասարակական խորհուրդների նիստերը, ուր նեղ ոլորտային հարցերը փորձ են արվում ներդաշնակեցնել, ինչպես նաև նիստերին քննարկվող հարցերից ելնելով հրավիրել նաև միջգերատեսչական և ՔՀԿ ներկայացուցիչներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդների

2016, 2017, 2018թթ. գործունեության վերաբերյալ վիճակագրական տվյալները

1) **ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**

Կառավարության 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշման ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թ.-ի հունիսի 3-ի N 62-Ա/1 հրամանի սահմանված ընթացակարգի համաձայն ձևավորվել է նախարարին կից հասարակական խորհուրդը[7] և հաստատվել է խորհրդի կազմը: Խորհրդի ռոտացիայի ընտրությունները հիշյալ հրամանի համաձայն իրականացվելու է 2018թ-ի հունիսին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 16 ՔՀԿ-ների լիազոր ներկայացուցիչ և 3 անհատ փորձագետ:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2018թ.-ի հուլիսի 31-ը իրականացվել է 6 նիստ, որից մեկը 2016թ-ին, երեքը՝ 2017թ-ին և երկու նիստ մինչ 2018թ-ի հուլիսի 31-ը:

Խորհրդի նիստերի օրակարգի ձևավորման գործընթացում մասնակցություն են ունեցել «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեշնլ»-ի Հայաստանյան ներկայացուցչությունը, «Արազա» ԲՀԿ-ն, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն, ու «Ակունք» ԷՍՀԿ ՀԿ-ն հանդես գալով նիստ հրավիրելու և օրակարգային հարցի առաջադրմամբ:

2) **ՀՀ Առողջապահության նախարարություն**

ՀՀ Առողջապահության նախարարին կից հասարակական խորհուրդը[8] ստեղծելու, հասարակական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին որոշման 06 մայիս 2016թ. N 1370-Ա հրամանի սահմանված ընթացակարգի համաձայն՝ 10 մայիսի 2016թ N 1390-Ա հրամանով հաստատվել է խորհրդի կազմը, ուստի վերընտրությունները իրականացվելու է 2018թ-ի մայիսին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 12 ՔՀԿ-ների լիազոր ներկայացուցիչ և 2 անհատ փորձագետ:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2018թ. հուլիս 31-ը իրականացվել է՝ 6 նիստ, որոնցից երկուսը 2016թ-ի, երեքը 2017թ-ին և մեկը 2018թ: Նիստերի համար աշխատակարգով սանմանված ժամանակացույցը պահպանված է:

Խորհրդի նիստերի օրակարգի ձևավորման գործընթացում նախաձեռնությամբ հանդես է եկել խորհրդի անդամ «Օրենսդրության զարգացման և հետազոտությունների կենտրոն» հիմնադրամը, «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ-ն:

Նիստերի համար աշխատակարգով սանմանված ժամանակացույցը պահպանված է:

3) **ՀՀ Արդարադատության նախարարություն՝**

ՀՀ Արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի9 անհատական կազմը հաստատելու և ՀՀ Արդարադատության նախարարի 2014 թվականի մայիսի 3-ի N131-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ Արդարադատության նախարարի 25 մայիսի 2016թ N 185/2-Ա հրամանով հաստատվել է, նախարարին կից հասարակական խորհրդի նոր կազմն ու աշխատակարգը, Կառավարության 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշման համաձայն: ՀՀ Արդարադատության նախարարի 2016թ. սեպտեմբերի 8-ի N 383-Ա հրամաններով համալրվել է խորհրդի կազմը: Համաձայն 25 մայիսի 2016թ N 185/2-Ա հրամանի խորհրդի կազմի վերընտրությունները տեղի են ունենալու 2018թ-ին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 26 ՔՀԿ-ներ:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2018թ. հուլիսի 31-ը իրականացվել է՝ խորհրդի 4 նիստ, երկուսը 2016թթ-ին՝ ընդլայնված և մեկական 2017 և 2018թթ:

Խորհրդի անդամները հանդես են եկել նիստ հրավիրելու և օրակարգ ձևավորելու առաջարկներով:

---

[7] ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհուրդ պաշտոնական կայքի հասցեն http://www.mlsa.am/?page_id=2839

[8] ՀՀ առողջապահության նախարարին կից հասարակական խորհուրդի պաշտոնական կայքի հասցեն http://www.moh.am/#1/176

[9] ՀՀ արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի պաշտոնական կայքի հասցեն http://www.moj.am/page/576

4) ՀՀ Բնապահպանության նախարարություն՝

ՀՀ Բնապահպանության նախարարի 14 հունիսի 2016թ ՀՀ Բնապահպանության նախարարի 2014թ սեպտեմբերի 2-ի «ՀՀ Բնապահպանության նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու և հասարակական խորհրդի կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին» N 256-Ա հրամանով հաստատված N 1 Հավելվածը շարադրել նոր Հավելվածով հրամանի համաձայն նախարարին կից ձևավորված հասարակական խորհուրդը10 վերընտրվել է Կառավարության 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշմամբ հաստատված ընթացակարգով: 12 հունվարի 2017թ N 145-Ա, 15 մայիսի 2017թ N 9-Ա, 22 հունիսի 2017թ. N 187-Ա հրամաններով համալրվել է խորհրդի կազմը: Համաձայն 14 հունիսի 2016թ ՀՀ Բնապահպանության նախարարի N 256-Ա հրամանի խորհրդի կազմի վերընտրությունները տեղի են ունենալու 2018թ-ի հունիսին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 23 ՔՀԿ-ներ:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2018թ. հուլիսի 31-ը իրականացվել է՝ 9 նիստ, որից 3 2016թ-ի ընթացքում, 2017թ-ին 5 նիստ և 1 նիստ 2018թ-ին:

Խորհրդի անդամները հանդես են եկել նիստ հրավիրելու և օրակարգ ձևավորելու առաջարկներով:

5) ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն՝

ՀՀ Գյուղատնտեսության նախարարի 18 ապրիլի 2016թ N 109-Ա հրամանով ուժը կորցրած է ճանաչվել 2015թ ապրիլի 13-ի N 115-Ա հրամանը և հաստատվել է նախարարին կից հասարակական խորհրդի11 կազմն ու աշխատակարգը՝ Կառավարության 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշմամբ հաստատված ընթացակարգով: Համաձայն 18 ապրիլի 2016թ N 109-Ա հրամանի խորհրդի կազմը ենթակա է վերընտրության 2018թ-ի ապրիլին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 21 ՔՀԿ ներկայացուցիչ, նրանցից 4 անհատ փորձագետ:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2018թ. հուլիսի 31-ը իրականացվել է՝ 4 նիստ, որոնցից երկուսը՝ 2016թ-ին, մեկը՝ 2017թ-ին, մեկը՝ 2018թ.-ին, խորհուրդը պատրաստել և հանրայնացնել է խորհրդր երկամյա գործունեության հաշվետվությունը:

Խորհրդի անդամ ՔՀԿ-ները հանդես չեն եկել նիստեր հրավիրելու և օրակարգի ձևավորման նախաձեռնությամբ:

6) ՀՀ Կրթության և գիտության նախարարություն՝

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2002թ սեպտեմբերի 12-ի N 1579 որոշմամբ հաստատված N 1 Հավելվածի 14.2-րդ կետը և 2015թ-ի նոյեմբերի 26-ի թիվ N 52 արձանագրային որոշումը ՀՀ Կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգը12 և կազմը հաստատելու մասին 2016թ-ի հրամանով ձևավորվել է խորհուրդը: Հրամանը չունի համար և ամսաթիվ, ուստի խորհրդի վերընտրությունները տեղի են ունեցել 2018թ-ին սահմանված կարգով:

Խորհրդի կազմում ընդգրկված ՔՀԿ-ների թիվը 21 են, սակայն կարող է այս տվյալը հավաստի չլինել, կազմի մասին պաշտոնական այս տվյալը հասանելի չլինելու հետևանքով:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2018թ. հուլիսի 31-ը իրականացվել է13՝ 9 նիստ մեկը 2016թ. հոկտեմբերին, հինգը՝ 2017թ.-ին և երեքը 2018թ.:

Խորհրդի ձևավորման պահից առ 2018թ. հուլիս չի պատրաստվել և չի հանրայնացվել խորհրդի գործունեության հաշվետվությունը: ՔՀԿ-ները չեն մասնակցել օրակարգի ձևավորմանը:

---

[10] ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհուրդի պաշտոնական հասցեն http://www.mnp.am/am/pages/139

[11] ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի պաշտոնական հասցեն http://minagro.am/%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80/%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%AB%D5%B6-%D5%AF%D5%AB%D6%81-%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D5%B8%D6%82%D6%80%D5%A4/%D6%85%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3-%D6%87-%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/

[12] http://edu.am/index.php/am/about/view/56

[13] ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի նիստերի մասին http://edu.am/index.php/am/documents/index/130

7) ՀՀ Մշակույթի նախարարություն՝

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 11-ի N 1298-Ն որոշմամբ հաստատված Հավելվածի 14.2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 16 արձանագրային որոշման 11-րդ կետը. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2016 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին կից հասարակական խորհուրդ[14] ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» N 245-Ա հրամանի Հավելվածով հաստատվել է խորհրդի աշխատակարգը, ևս 3 հրամաններով հաստատվել է խորհրդի կազմը:

Խորհրդի կազմում ընդգրկված ՔՀԿ-ների թիվը 22 են, որոնցից 3 անհատ փորձագետներ:

Խորհուրդը ձևավորման պահից ներառյալ 2018թ. հուլիսի 31-ը իրականացրել է 3 նիստ երկուսը 2016թ և մեկը 2017թ դեկտեմբերին:

Խորհրդի անդամները հանդես չեն եկել նիստ հրավիրելու և օրակարգային հարցերի առաջադրմամբ, խորհրդի գործունեության հաշվետվություն չի պատրաստվել և չի հանրայնացվել:

8) ՀՀ Պաշտպանության նախարարություն՝

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2015թ. նոյեմբերի 26-ի N 52 արձանագրային որոշման և ՀՀ Կառավարության 2016թ. մարտի 31-ի N 337-Ն որոշման պահանջները, ինչպես նաև ամփոփելով ՀՀ Պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդին անդամակցության համար սահմանված կարգով ներկայացված հայտերի քննարկման արդյունքները՝ ՀՀ Պաշտպանության նախարարը 07.06.2016թ. ստորագրել է «ՀՀ Պաշտպանության նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու, հասարակական խորհրդի աշխատակարգը և հասարակական խորհրդի կազմը հաստատելու մասին» հրաման: Համաձայն սույն հրամանի խորհրդի վերընտրությունները տեղի կունենան 2018թ. Հունիսին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 13 ՔՀԿ լիազոր ներկայացուցիչ և նախարարի խորհրդականը:

Համաձայն ՀՀ Կառավարության 2015թ. նոյեմբերի 26-ի N 52 արձանագրային որոշմամամբ հաստատված օրինակելի աշխատակարգի նախարարության պաշտոնյան չի կարող հանդես գալ որպես խորհրդր անդամ, այլ կարող է ունենալ միայն հրավիրյալի կարգավիճակ, կամ հանդես գալ որպես խորհրդի քարտուղար/համակարգող:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2018թ. հուլիսի 31-ը իրականացված նիստերի մասին հասանելի տեղեկատվություն չկա, պայմանավորված քննարկվող հարցերի գաղտնիությամբ:

9) ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն՝

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 52 արձանագրային որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի N 825-Ն որոշման N 1 Հավելվածի 14.2-րդ կետի ստեղծվել է ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին կից հասարակական խորհուրդը[15]: Հիմք ընդունելով անդամակցության համար սահմանված կարգով ներկայացված հայտերի քննարկման արդյունքները՝ ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 11 մայիսի 2016թ N 67-Ա/1 հրամանով հաստատվել է խորրդի նոր աշխատակարգն ու կազմը: Խորհրդի աշխատակարգի համաձայն խորհրդի ընտրությունները նախատեսվում է 2018թ մայիսին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 16 կազմակերպություն:

Խորհրդի ձևավորման պահից, համաձայն նախարարության պաշտոնական գրության, ներառյալ 2018թ. հուլիսի 31-ը իրականացվել 7 նիստ, որից երկուսը 2016թ-ին հինգը 2017թ-ին, 2018թ-ին նիստեր չեն հրավիրվել: Խորհրդի նիստերի արձանագրությունները 2017թ-ին կայքում բացակայում էին, 2018թ-ից դրանք տեղադրվել են, սակայն պաշտոնապես ներկայացված 7 նիստի փոխարեն առկա է 5 նիստի արձանագրություն՝ երկուսը 2016թ-ի և երեքը 2017թթ: Նիստերի օրակարգը ձևավորվել է խորհրդի անդամ ՔՀԿ ներկայացուցիչների կողմից, բացառությամբ մեկ հարցի: Նիստերի օրակարգի ձևավորման համար նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետը նիստ

[14] ՀՀ մշակույթի նախարարին կից հասարակական խորհուրդ պաշտոնական հասցեն http://mincult.am/advisers.html

[15] ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի պաշտոնական հասցեն http://www.msy.am/category/nakhararin-kic-kolegia.html

հրավիրելու հայտարարության հետ հարցում է հղում խորհրդի անդամներին օրակարգային հարց առաջադրելու մասին, ներկայացված առաջարկների հիման վրա նախարարը հաստատում է նիստի օրակարգը:

10) ՀՀ Սփյուռքի նախարարություն

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարին կից հասարակական խորհուրդը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N 337-Ն որոշմամբ:

Հասարակական խորհրդի աշխատակարգի օրինակելի ձևը հաստատվել է ՀՀ Կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 52 արձանագրային որոշմամբ, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարի 2016 թվականի ապրիլի 12-ի N82-Ա հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգը:

2016 թվականի ապրիլի 29-ի N103-Ա հրամանով հաստավել է նախարարին կից հասարակական խորհրդի կազմը: Համաձայն որի խորհրդի վերընտրությունները տեղի կունենան 2018թ ապրիլին:

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարին կից հասարակական խորհուրդն[16] ունի այն առանձնահատկությունը, որ բացի իր կազմում ընդգրկված հայաստանյան հասարակական կազմակերպություններից, զանգվածային լրատվության միջոցներից, ազգային փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպություններից, ինչպես նաև հեղինակավոր և ճանաչված անձանցից, ընդգրկում է նաև սփյուռքյան կառույցներ և սփյուռքահայերի: Մի հանգամանք, որը հնարավորություն է ընձեռում աշխարհի բոլոր անկյուններում գտնվող հայերին ավելի տեղեկացված լինել Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության գործունեությանը, քննարկել իրականացվող ծրագրերը և դրանց արդյունավետությունը: Հայաստանում մշտապես չբնակվող խորհրդի անդամ սփյուռքահայերը կարող են մասնակցել խորհրդի նիստերին հեռակա կարգով՝ քննարկվող հարցերի վերաբերյալ համացանցի միջոցով ուղարկելով իրենց առաջարկներն ու դիտողությունները, ինչպես նաև հեռակոնֆերանսների միջոցով:

Խորհրդի կազմում ընդգրկված են 20 ՔՀԿ լիազոր ներկայացուցիչ, որոնցից 3 անհատ փորձագետներ են:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2018թ. հուլիսի 31-ը կայքում տեղադրված տեղեկատվության համաձայն իրականացվել է՝ 2 նիստ, մեկական նիստ 2016թ և 2017թ:

11) ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության 12 ապրիլի 2016թ հրամանով հաստատվել է նախարարին կից հասարակական խորհրդի[17] աշխատակարգը և մայիսի 12-ին հաստատվել է խորհրդի կազմը: Համաձայն որի խորհրդի վերընտրությունները տեղի կունենան 2018թ մայիսին:

Խորհրդի կազմում ընդգրկված են 15 ՔՀԿ լիազոր ներկայացուցիչ, որոնցից մեկը ԼՂՀ փոխվարչապետի իրավախորհրդատուն: Համաձայն ՀՀ Կառավարության 2015թ. նոյեմբերի 26-ի N 52 արձանագրային որոշմամամբ հաստատված օրինակելի աշխատակարգի պետական պաշտոնյան կարող է հանդես գալ խորհրդում միայն հրավիրյալի կարգավիճակ, կամ որպես խորհրդի քարտուղար/համակարգող, նախարարի ներկայացուցիչ:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2018թ. հուլիսի 31-ը իրականացվել է՝ 6 նիստ, երեքը 2016թ-ին, երկուսը 2017թ-ին և մեկը 2018թ.:

Խորհրդի անդամ անհատ փորձագետ Վ. Պետրոսյանը մասնակցել է օրակարգի ձևավորմանը և հանդես եկել օրենքի նախագծի ներկայացմամբ:

12) ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 15 ապրիլի N 375-Ա հրամանով հաստատվել է նախարարին կից Հասարակական խորհրդի աշխատակարգը, 07 հունիսի 2016թ N 550-Ա հրամանով հաստատվել է

[16] Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարին կից հասարակական խորհուրդի պաշտոնական հասցեն http://www.mindiaspora.am/am/hasarakakan_xorhurd

[17] ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին կից հասարակական խորհրդի պաշտոնական հասցեն http://www.mtad.am/hy/ashkhatakarq/

նախարարին կից հասարակական խորհրդի[18] կազմը: Նախարարության վերակազմավորման և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ձևավորման պատճառով խորհուրդը 2016թ-ին գործունեություն չի ծավալել: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը 02 փետրվարի 2017թ N 138-Ա հրամանով հաստատել է 15 ապրիլի 2016թ N 375 հրամանի փոփոխությունները, իսկ 02 մարտի 2017թ. N 171 հրամանով հաստատել է 07 հունիսի 2016թ N 550-Ա հրամանի փոփոխությունները: Համաձայն հիշյալ հրամանի խորհրդի վերընտրությունը տեղի կունենա 2019թ. մարտին:

Խորհրդի ձևավորման պահից ներառյալ 2018թ. հուլիսի 31-ը հրավիրվել է 2 նիստ՝ մեկական 2017թ և 2018թ:

Խորհրդի անդամ «Արազա» ԲՀԿ-ն հանդես է եկել երկու նիստերը հրավիրելու և օրակարգ ձևավորելու առաջարկով, որոնք ընդունվել են քարտուղարության կողմից, անգամ առանց խորհրդի անդամների ¾-ի ստորագրության հավաքագրման:

13) ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն՝

Ի պատասխան «Արազա» ԲՀԿ-ի 10 նոյոմբերի թիվ 17-Կ հարցման, ՀՀ Տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 17 նոյեմբերի թիվ N 08/16.1/20825-17 պաշտոնական գրության տեղեկացանք, որ ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 25 մայիսի թիվ 382-Ա հրամանով հաստատված է ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հասարակական խորհրդի աշխատակարգը, որը սահմանում է խորհրդի կազմի, նիստերի վարման հետ կապված հարցերի կանոնակարգումը: Եվ ներկայացված է նախարարության պաշտոնական կայքի հղումը[19] (նախարարին կից կոլեգիայի հասցեն է): Սակայն 2018թ-ի հունիսին նախարարության հանրային կապերի վարչության ղեկավարի հետ կայքում խորհրդի գործունեության մասին տեղեկատվության բացակայության և խորհրդի անդամների հետ հարցաշարի համաձայնեցման հետ կապված բանակցության արդյունքում տեղեկացանք, որ խորհուրդն այս ընթացքում նիստեր չի իրականացրել, ուստի տեղեկատվություն չկա այդ մասին, ուստի նաև հարցում իրականացնելն էլ անարդյունավետ են գտնում:

[18] ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին կից հասարակական խորհրդի պաշտոնական հասցեն http://www.mineconomy.am/hy/71

[19] ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարին կից կոլեգիա հասցեն http://www.mtcit.am/main.php?lang=1&page_id=490

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19 Հեռ./ֆաքս՝ + 374 10 527400

«ԱՐԱԶԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Թ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Աբրահամյան

Ձեր հարցմանն ի պատասխան՝ հայտնում ենք, որ ՀՀ Ազգային ժողովի 6-րդ գումարման առաջին, երկրորդ եւ երրորդ նստաշրջանների ընթացքում ՀՀ ԱԺ մշտական հանձաժողովներն ու խմբակցությունները կազմակերպել են տասներեք խորհրդարանական լսումներ:

Կից ներկայացնում ենք խորհրդարանական լսումներ կազմակերպած ՀՀ ԱԺ մշտական հանձաժողովներն ու խմբակցությունները, լսումների թեմաները եւ մասնակցած ՔՀԿ-ների թիվը:

ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովներ եւ խմբակցություններ	Լսումների թեման	ՔՀԿ թիվը
1. Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով	«Աղետների ռիսկերի կառավարման բնագավառում ազգային կարողությունների զարգացումը», «Զինապարտության եւ զինվորական ծառայության մասին օրենսդրական նոր կարգավորումների վերաբերյալ»	15
2. Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով	«Ընտանեկան բռնության կանխարգելման եւ ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի նախագծի նախնական քննարկման վերաբերյալ»	21
3. ԱԺ «Ելք» խմբակցություն	«ՀՀ մասով Եվրասիական տնտեսական միության պայմանագրի գործողությունը դադարեցնելու գործընթաց սկսելու վերաբերյալ»	3
4. Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողով	«Մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտում ընթացող բարեփոխումներն ու օրենսդրական հիմնախնդիրները» «Բարձրագույն կրթության ոլորտի օրենսդրական բարեփոխումներն ու հիմնախնդիրները»	2
5. ԱԺ արտաքին հարաբերությունների, ՀՀ ԱԺ եվրոպական ինտեգրման մշտական հանձնաժողովներ	«Հայաստան-ԵՄ. համապարփակ եւ ընդլայնված գործընկերություն»	7
6. Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով	«Առանձին ապրանքատեսակների գների բարձրացման պատճառները եւ գնաճը մեղմելու հնարավորությունները»	17
7. Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողով	«Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմներ՝ այլընտրա՞նք, թե՞ պարտադրանք»	26

8. Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով	«Սումգայիթյան ջարդեր. հայատյացությունը որպես Ադրբեջանի պետական քաղաքականություն»	7
9. ԱԺ «Ելք» խմբակցություն	«2008 թվականի մարտի 1-2-ի իրադարձությունների վերաբերյալ» ԱԺ հայտարարության նախագծի վերաբերյալ»	4
10. ԱԺ «Ծառուկյան» խմբակցություն	«Դեղատոմսերի ձեւերը, դեղատոմսեր գրելու, դեղեր բաց թողնելու (ներառյալ էլեկտրոնային եղանակով) կարգի, ինչպես նաեւ դեղերի եւ դեղանյութերի հաշվառման կարգը սահմանելու վերաբերյալ»	
11. Առողջապահության եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության եւ սոցիալական ներառման մասին»	20

Ձեր կողմից առաջարկվող հանդիպումը կազմակերպելու նպատակով խնդրում ենք ներկայացնել մասնակիցների ցանկ: Հանդիպման օրվա և ժամի հետ կապված կտրամադրենք լրացուցիչ տեղեկություն:

Հարգանքով՝

ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐՑԱՇԱՐ

1. **Խորհրդում Ձեր կարգավիճակը**

☐ Խորհրդի քարտուղար ☐ Խորհրդի անդամ

2. **Խորհրդում Ձեր աշխատանքի փորձը**

☐ Մինչև 2 տարի ☐ Ավելի քան 2 տարի

3. **Գնահատե՛ք նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության կարևորությունը**

☐ Մեծ է ☐ Նկատելի է ☐ Կարևոր չէ

4. **Ո՞րն է/որո՞նք են Ձեր հիմնական գործառույթը/ները**

☐ Խորհրդի գործունեության համակարգում,

☐ Խորհրդի գործունեության մասին տեղեկատվության հանրայնացում

☐ Խորհրդի գործունեության տարեկան հաշվետվության մշակում

☐ Մասնակցություն նիստերին,

☐ Մասնակցություն նիստերի օրակարգի ձևավորմանը

☐ Նիստերի օրակարգում քննարկվող նախագծերի վերաբերյալ առաջարկների ներկայացում

☐ Մասնակցություն աշխատանքային խմբերում

☐ Այլ (մանրամասնե՛ք) _____

5. **Գնահատե՛ք խորհրդի գործունեության շրջանակում անդամների ներկայացրած առաջարկությունների մասին տեղեկատվության տրամադրման մեխանիզմը, առաջարկեք Ձեր տարբերակը**

☐ Հարմար է

☐ Հարմար չէ՝ խորհրդի անդամների ներկայացրած առաջարկությունները նախապես հասանելի չեն

☐ Հարմար չէ՝ խորհրդի անդամների առաջարկությունները գրավոր չեն ներկայացվում

☐ Այլ (մանրամասնե՛ք) _____

6. **Որքա՞ն ժամանակ է սովորաբար պահանջվում նիստը նախապատրաստելու համար**

☐ 5-7 օր ☐ ☐ 7-ից ավելի օր

7. **Որո՞ք են նիստերի գումարումն ուշացնելու պատճառները**

☐ Նախարարի ծանրաբեռնվածությունը

☐ Օրակարգի հարցերի բացակայությունը

☐ Օրակարգի ձևավորման հարցում խորհրդր անդամների պասիվությունը

☐ Օրակարգում ներառված նախագծերի վերաբերյալ առաջարկությունների բացակայությունը

☐ Այլ (մանրամասնե՛ք) _____

8. **Գնահատե՛ք խորհրդի ազդեցությունը**

- ☐ Մեծ
- ☐ Բավարար
- ☐ Խորհրդը ֆորմալ մարմին է
- ☐ Խորհրդի անդամները բավարար չափով չեն օգտվում իրենց իրավասություններից
- ☐ Խորհրդի անդամները բավարարված չեն իրենց ունեցած ազդեցությունից
- ☐ Այլ (մանրամասնե՛ք) _____

9. **Գնահատե՝ք Խորհրդի գործունեության մասին հանրության տեղեկանալու հնարավորությունը՝ 1-5 միավոր**

Պաշտոնական կայքում առանձնացված էջ	Խորհրդի աշխատակարգը, կազմը	Տեղեկատվո յուն խորհրդի կազմում ընդգրկվելու ձևաթղթերի մասին	Նիստերի օրակարգ, արձանագրություն ները	Տարեկան հաշվետվությու ններ

5 - Լավ, տեղեկատվությունը հասանելի է և թարմացվում է

4 - Բավարար

3 - Բավարար չէ, տեղեկատվությունը հնացած է

2 - Բավարար չէ, տեղեկատվությունը թերի է

1 - Բավարար չէ, տեղեկատվությունը խրթին է շարադրած

10. **Ի՞նչ խնդիրներ են առավել հաճախ առաջանում խորհրդի գործունեության ընթացքում**

- ☐ Նիստերի օրակարգի ձևավորում,
- ☐ Օրակարգում ընդգրկված հարցերի մեծ ծավալ, ժամանակի սղություն
- ☐ Նիստում առաջարկած աշխատանքային խմբերի հետագա աշխատանքի կազմակերպում
- ☐ Նիստերի օրակարգի ձևավորման և նիստերի արձանագրություններին ժամանակին արձագանքում
- ☐ Խորհրդի գործունեության տարեկան հաշվետվության մշակում
- ☐ Այլ (մանրամասնե՛ք) _____

11. **Գնահատե՛ք խորհրդի նիստին քննարկված առաջարկությունների ազդեցությաունը**

- ☐ Բավարար է
- ☐ Բավարար չէ, դրանք ընդամնը արձանագրվում են
- ☐ Բավարար չէ, դրանք չեն ներառվում ամփոփաթերթում,
- ☐ Բավարար չէ, չկա առաջարկությունների հետագա կարգավիճակի վերաբերյալ հասանելի տեղեկատվություն
- ☐ Այլ (մանրամասնե՛ք) _____

12. **Ընդգրկվե՞լ եք արդիոք խորհրդի աշխատանքային խմբերում, եթե այո, ապա գնահատեք դրա աշխատանքի արդյունավետությունը**

☐ Խումբը արդյունավետ է աշխատել

☐ Խումբը որոշ ժամանակ արդյունավետ է աշխատել

☐ Խմբի առաջարկություններն ընդունվել են նախարարության կողմից

☐ Խմբի առաջարկությունները ներառվել են ամփոփաթերթում

13. Մասնակցե՞լ եք արդիոք նիստի օրակարգի ձևավորմանը

☐ Ներկայացրել եմ, այն ընդունվել է քարտուղարության կողմից

☐ Ներկայացրել եմ, այն ընդունվել է նիստում աշխատակարգի համաձայն

☐ Ներկայացրել եմ քննարկման համար նյութ, այն չի ընդունվել անդամների 3/4 աջակցությունը չստանալու պատճառով

14. Գնահատե՛ք նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության արդյունավետությունը

☐ Շատ մեծ ☐ Մեծ ☐ Բավարար ☐ Անբավարար

14.1 Եթե բավարար, կամ անբավարար է, ապա ինչու՞

☐ Խորհուրդը ֆորմալ հարթակ է

☐ Խորհրդի անդամները բավարար ակտիվ չեն

☐ Խորհրդի անդամները բավարար պատրաստված չեն

☐ Խորհրդի անդամները լիարժեք չեն պատկերացնում իրենց իրավասությունների շրջանակը

☐ Խորհրդի անդամների միջև չկա համագործակցություն նիստերից դուրս

☐ Այլ (մանրամասնե՛ք) _____

15. Արդյո՞ք խորհրդի անդամները իրենց առաջարկությունները ներկայացնում են e-draft.am պաշտոնական կայքում

☐ Այո

☐ Ոչ

15.1 Եթե ոչ, ապա ինչու՞

☐ Առերես քննարկումն ավելի նպատակահարմար է

☐ Կայքի օգտատեր չեմ

☐ Կայքում ներկայացված առաջարկությունների հետագա ճակատագիրն անորոշ է

☐ Այլ (մանրամասնե՛ք) _____

16. **Գնահատե՛ք խորհրդի գործունեության տարեկան հաշվետվության մշակման և հանրայնացման ընթացակարգը**

☐ Լավն է

☐ Բավարար է

☐ Անբավարար է

☐ Բարելավման կարիք կա

☐ Այլ (մանրամասնե՛ք) _____

17. **Արդյո՞ք բավարար արդյունավետ եք համարում խորհրդի համալրման մեխանիզմը**

☐ Այո ☐ Ցանկալի է վերանայել ☐ Խորհրդում մնացող անդամների ընտրությունը պետք է պայմանավորվի 2 տարվա ընթացքում նրանց կատարած աշխատանքի արդյունավետությամբ

18. **Խորհրդի գործունեության հետ կապված առկա դժվարությունները և դրանց հաղթահարմանն ուղղված Ձեր առաջարկությունները**

Հարցազրուցավարի դիտարկումները

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Խորհրդի անդամ ՔՀԿ-ների միջև փոխգործակցության մշակույթի ցածր մակարդակը, որպես փորձագետ բացառապես նեղ խմբային շահերով զբաղվելու և լրացուցիչ շահերի պաշտպանության ծանրաբեռնվածությունից ու պատասխանատվությունից խուսափելու վարքագիծը, երբեմն անգամ խորհրդի անդամի իրավասությունների մասին տեղեկացվածության ցածր մակարդակը նվազեցնում են խորհրդի գործունեության արդյունավետությունը հանրային շահերի պաշտպանության տեսանկյունից:
- Լուրջ խոչընդոտ եմ համարում աշխատակարգով՝ վիճակահանությամբ սահմանված ռոտացիոն ընթացակարգը և տարեկան հաշվետվության հստակ ժամանակահատվածի ու պատասխանատուների անհստակությունը, որի հիմնավորմամբ էլ նախարարությունների մեծամասնությունն այդպես էլ չեն պատրաստել հաշվետվություններ:

Փոխել աշխատակարգում ռոտացիայի ընթացակարգը, խորհրդում մնացող անդամների ընտրությունը պետք է պայմանավորվի 2 տարվա ընթացքում նրանց կատարած աշխատանքի արդյունավետությամբ:

Խորհրդի գործունեության տարեկան հաշվետվության համար սահմանել հստակ ժամանակացույց, պատասխանատու կողմերին և բովանդակային չափանիշներ: Այդ չափանիշներից պետք է լինի համառոտ տեղեկատվություն խորհրդի անդամների գործունեության մասին, որպես վերջիններիս գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության գնահատման գործիք:

Այս փոփոխությունները ակնհայտորեն կխթանեն խորհրդի անդամների, ուստի և խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Ավելին կբարձրանա խորհրդի և խորհրդի անդամների հանդեպ հանրային վստահության մակարդակը:

- Խորհուրդների գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորում է խորհրդի հանդեպ նախարարի ունեցած վերաբերմունքով:
- Ցանկալի է որ խորհուրդը իր կազմում ունենա գիտատեխնիկական խմբեր:
- Ոչ բոլոր առաջարկների վերաբերյալ արձագանքներն են փաստաթղթային ամրագրում ստանում: Եթե մարդը ամենայն պատասխանատվությամբ առաջարկություն է արել, անկախ դրա որակից, պետք է հարգել իր մտավոր աշխատանքը և դրան վերաբերող տեղեկատվությունն ամբողջական ներկայացնել:
- Խորհրդի անդամի կողմից համակողմանի վերլուծությամբ արված առաջարկությանը պատշաճ մասնագիտական մոտեցում ցուցաբերելու փոխարեն, նախարարության աշխատակազմից ոմանք էժանագին բալագանային վարքաձևերով են փորձում հակազդել: Սակայն , երբ քննարկվող տվյալ խնդրի վերաբերյալ նեղ մասնագիտական հարցադրում ես առաջադրում, հանցանքի պահին բռնվածի հայացքով լռում են: Նման դեպքում ինպիսի՞ն կարող է խորհրդի անդամի համար լինել այս կառույցի ազդեցողական արժեքը:
- Ոլորտային տեսանկյունից պետք է ձևավորվեն մասնագիտական-աշխատանքային խմբեր, որոնք նիստի ընթացքում քննարկվող խնդիրները, ըստ խնդրի աշխատատարության՝ 15-30 օր ողջամիտ ժամկետում տվյալ տիրույթին փոխկապակցված ոլորտներիի ներկայացուցիչների հետ լրացուցիչ կուսումնասիրեն այն և կփորձեն հնարավոր լուծումներ առաջարկել: Նման դասակարգումը խորհրդի գործունեության որոշարկում է, ինչը զերծ կպահի ընդհանրացուցիչ լղոզումներից:
- Եթե օրակարգի ձևավորման համար խորհրդի անդամը որևէ խնդիր է քննարկման ներկայացնում, այն ոչ կարևոր համարելու դեպքում հիմնավորեն, թե կյանքում առաջացած այդ խնդրի և դրանից բխող ոչ անէական հետևանքների անարժեքությունն ի՞նչն է փաստում: Առանց որևէ բացատրության առաջարկությունն արհամարհալից կերպով պարզապես չընդգրկելը անհարգալից վերաբերմունք է հասարակական հիմունքով աշխատանք կատարող խորհրդի անդամի հանդեպ:
- Հանրայնացնել և համացանցային տիրույթում հնարավորին չափ մատչելի դարձնել նիստի ժամանակ ընթացող քնարկման ողջ սղագրությունը՝ անխտիր ներառելով բոլոր առաջարկությունները, դրանց առնչվող առարկությունները, նշյալների հիմնավորումներն ու հավելյալ արձագանքումները: Սա ժողովրդավարական բաց ու թափանցիկ աշխատելաոճի նախապայմանն է, որը թույլ չի տա նախարարության որոշ աշխատակիցների տեքստային նենգափոխումներով արձանգրության մեջ

նախարարին հնարավորին չափ շահեկան դիրքից ներկայացնել: Իրենց որոշ աշխատակիցների հեղինակած օրենսդրական նախաձեռնության խայտառակ մակերեսային աշխատանքը կոծկել՝ խորհրդի անդամի խոսքի կրճատումով:

- Եթե խորհրդի անդամը որևէ առաջարկություն կամ առարկություն է ներկայացրել, և այն նախարարի ու խորհրդի անդամներից ոմանց հավանությանն է արժանացել, ապա առնվազն կոռեկտ չէ, դրա հետագա ճակատագրի մասին գաղափարի հեղինակին տեղյակ չպահելը: Հետագայում հարցին լուծում չտալու դեպքում, դադարեցումը մանրամասն չհիմնավորելը: Իսկ այն լուծելու և դրական արդյունք գրանցելու դեպքում, հաջողության ակունքում գտնվողին գոնե հանուն հեղինակային իրավունքի հրապարակավ չհիշատակելը: Այլապես, եթե պետք է խորհրդի անդամները խնդիրները բարձրաձայնեն, բայց նախախրարությունը նկատառումներն ու դիտարկումները հաշվի չառնելով, իր գիտեցածն անի, ապա շարունակելու ենք նիստում բոլորս խոսել խոսելու համար: Այսինքն, թռչնանշանային քաղաքականության որդեգրումով ժամավաճառությամբ զբաղվել:
- Կանոնակարգել հասարակական խորհրդի կազմում ընդգրկված անդամների գործառույթները:
- Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ նախապես տրամադրել դրանց համառոտ բովանդակությունը:
- Չի կատարվում առաջարկությունների ազդեցության գնահատում, և դրանք հետագայում չեն քննարկվում:
- e-draft –ը իմաստ չունի, քանի որ ոչ բոլորն են օգտվում նման կայքերից և շահառուների մեծ մասը չունեն համակարգիչներ:
- Տարեկան հաշվետվություն չի պատրաստվել և չի նախատեսված կանոնակարգերով:
- Տարեկան աշխատանքային պլան, չի կազմվում և չի հաստատվում համապատասխան պահանջներով
- Հասարակական խորհրդի նիստերին և քննարկմանը չեն հրավիրվում հիմնական շահառուները (ֆերմերները, գյուղատնտեսական արտադրանք արտադրողները)
- Քննարկումների արդյունքում արված առաջարկությունները կիրառություն չեն գտնում, դրանք ձևական բնույթ ունեն:
- Կատարված աշխատանքները մոնիթորինգի չեն ենթարկվում:
- Քննարկվող հացերի շրջանակը պետք է լինի ավելի նեղ, որպեսզի հասցնենք կարծիք հայտնելու և քննարկելու:
- Գուցե ավելի հաճա՞խ հանդիպենք:
- Հետադարձ կապի ապահովում և ներկայացում թե նիստի արդյունքում ի՞նչ փոխվեց կամ ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ:
- Հաշվետվողականություն ԱՆ կողմից փոփոխությունների վերաբերյալ:
- Խորհրդի անդամների մոտիվացիայի համար հաշվետվության մեջ ներառել անդամների դերակատարության մասին տեղեկատվությունը:
- Ամեն նիստից հետո խորհրդի քարտուղարին խորհրդի անդամների կողմից գրավոր ներկայացնել հաջորդ նիստում քննարկվող հարցերը: Իսկ նիստից մի քանի օր առաջ խորհրդի քարտուղարը մեզ էլ.հասցեով ծանուցի խորհրդի նիստի օրակարգի հարցերի վերաբերյալ:
- Նախարարի զբաղվածությունը հնարավորություն չի տալիս սիստեմատիկ գրաֆիկով աշխատանք կազմակերպել: Փաստացի չկա աշխատանքային գրաֆիկ:
- Քննարկվող հարցերը պետք է նախապես խմբավորվեն, որից հետո կազմվի նիստերի օրակարգը: Մինչև օրս ԿԳ նախարարությունն է կազմել օրակարգը քննարկվող հարցերի և քննարկումների ընթացքում շեղումներ չեն եղել:
- Այլ կետերում նշված գործառույթների համար, եթե հնարավորություն ընձեռվեր, համապատասխան աշխատանքային գործիքակազմ ու լծակներ տրամադրվեին, դրանք էլ կիրագործեի:
- Մի իրականությունում, ուր պետական ծառայողների համար առաջնահինը ոչ թե օրինապահությունն է, այլ օրենքի շրջանցումը, ապա իրենց ենթակայության հասարակական

խորհուրդները բնականաբար պետք է հայտնվեն ֆորմալ կարգավիճակում: Եթե նախարարը այսուհետ մտադիր է ականջալուր լինել իր ենթակայությամբ ձևավորվող հասարակական խորհրդի հորդորներին, ապա վերջինիս գործառույթը պետք լինի կանոնակարգված, իսկ որոշումները հասցեագրված և հասանելի: Բնականաբար խորհուրդը նաև պետք է կազմավորված լինի ըստ ոլորտների առանձնացված հանձնախմբերից, որոնցից մեկում պետք է ընդգրկվեն պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությամբ և օգտագործմամբ մտահոգված մասնագետներ:

- Մշակույթի նախարարին կից հասարակական խորհուրդը մինչ օրս աշխատել է անարդյունավետ, նիստերը պարբերաբար չեն կայացել, հարցերը քննարկվել են հապճեպ, արդյունքում որևէ խնդիր չի լուծվել, հետևաբար անհրաժեշտ է այն ակտիվացնել, ստեղծել ոլորտային աշխատանքային խմբեր և, կազմակերպել արդյունավետ մասնագիտական քննարկումներ:
- Տարանջատված չեն խորհրդի գործունեության մեջ (ըստ մասնագիտական ոլորտների) ոլորտները, որպեսզի յուրաքանչյուրը ներկա լինի իր մասնագիտությանն առնչվող ոլորտին:
- Նիստերի ընթացքում ոլորտների խնդիրների տարանջատում:
- e-draft.am պաշտոնական կայքից օգտվելու մշակույթը չի ձևավորվել և ամրացել:
- Նիստերի հրավիրման օրերը և ժամերը անդամների հետ չի քննարկվում, այդ պատճառով բացակայությունները շատ են: Հաշվի առնելով նաև անդամերի՝ հասարակական հիմուներով մասնակցությունը, կարծում եմ՝ կարելի է որոշակի հարցումներ իրականավել ժամերի նպատակարմարության վերաբերյալ, հատկապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նիստերը գումարվում եմ աշխատաքյին ժամերի: Կարելի է նախատեսել առցանց մասնակցության տարբերակ, օրինակ՝ մարզերից առավել ակտիվ մանակցություն ապահովելու համար:
- Տեխնիկական խոչընդոտնորից բացի կառաջարկեմ նաև տեղեկատվական հանդիպումներ ունենալ նորընտիր անդամների հետ, որպեսզի վերջիններս լիարժեք պատկերացնեն իրենց կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները:
- Նախատեսել խորհրդի ունկնդրի կարգավիճակ և ունկնդրին ընձեռել նիստերին անուղղակի մասնակցության իրավունք (նրանք հետագայում ավելի պատրաստված կլինեն խորհրդի աշխատանքներին ինտեգրվելու համար):
- Խորհրդի մեկ նիստի շրջանակում օրակարգը ձևավորել մեկ ոլորտային հարցի շուրջ՝ ներառելով կոնկրետ ոլորտին վերաբերող հարցեր և խնդիրներ:
- Խորհրդի նիստերը գումարել հստակ պարբերականությամբ:
- Խ ուհրդի օրակարգը ծանուցել առնվազն մեկ շաբաթ առաջ:
- Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի հանձնաժողովում ներգրավվող անդամի մասնագիտական փորձառության և մասնակցության ակտիվության չափանիշների վրա:
- Ձևավորել անդամի ակտիվության աստիճանի սանդղակ, որի արդյունքում հնարավորություն կստեղծվի հետեվել անդամի պարտաճանաչությանը և հարկ եղած դեպքում նրան փոխարինել մեկ այլ մասնագետով:
- Ձևավորել մասնագիտական աշխատանքային խմբեր, որոնց կողմից ներկայացվում են մասնագիտական եզրակացություններ ըստ քննարկող հարցերի առջնահերթության և ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման հրատապության:
- Խորհրդի օրակարգից դուրս են մնում ոլորտային մեծ թվով հարցեր:
- Առաջին հերթին պետք է նշել, որ խորհրդի նիստի ժամանակ խորհրդի անդամներին են ներկայացվում արդեն պատրաստի հարցեր, այսինքն, խորհրդի անդամները նախօրոք չեն մասնակցում այդ հարցերի քննարկմանը, չեն կարող առաջարկություններ անել այդ հարցերի վերաբերյալ: Տվյալ դեպքում խորհուրդը կրում է ֆորմալ բնույթ: Ուստի անհրաժեշտ է, որ խորհրդի անդամները ևս ներկա լինեն այդ հարցերի քննարկման փուլերին և հանդես գան տարբեր առաջարկություններով:
- Խորհրդի շրջանակներում տարբեր հարցերի քննարկման համար ցանկալի է ստեղծել մասնագիտական աշխատանքային խմբեր, որոնք կկարողանան աշխատել տեղերում և լուծեն տարբեր հարցեր:

- Բոլոր առաջարկությունները էլեկտրոնային տարբերակով նախապես տրամադրել հանրային խորհրդի անդամներին:
- Խորհրդի նիստերի օրակարգը հիմնականում պետք է ձեւավորվի խորհրդի անդամների առաջարկություններից:
- Տեղական ինքնակառավարման ոլորտում էական դերակատարություն ունեցող, խորհրդի անդամ ՀԿ-ները պարբերաբար պետք է ներկայացնեն իրենց ոլորտում կատարած աշխատանքը:
- Նախարարությունը նոր փաստաթղթերը շրջանառություն մեջ դնելուց առաջ դրանք պետք է քննարկի խորհրդում և ներկայացված կարծիքները հաշվի առնի լրամշակման ժամանակ:
- Հարցաշարը բովանդակային մասով լավ չի կազմվել, այն ամբողջական իրավիճակը չի ընդգրկում, հետեւաբար հնարավորություն չի տալիս հստակ պատասխանել հարցին:
- Բարձրացնել տեղական ինքնակառավարման համակարգում առաջացած հիմնախնդիրները, քննարկել և գտնել լուծման ուղիները:
- Խորհրդի նիստերը հրավիրվեն ավելի հաճախ, հստակ պարբերականությամբ:
- Խորհրդի անդամները հրավիրվեն մասնակցելու նախարարության կողմից կազմակերպվող համաժողովներին և այլ միջոցառումներին, ոլորտի օրենսդրությանն առնչվող հանրային լսումներին կամ քննարկումներին:
- Խորհրդի անդամները միմյանց հրավիրեն մասնակցելու Տեղական ինքնակառավարմանը կամ տարածքային կառավարմանն առնչվող իրենց կազմակերպությունների միջոցառումներին:
- Խորհրդի նախագահը՝ ՏԿԶ նախարարը առնվազն եռամսյակը մեկ ներկայացնի հաշվետվություն իր գործունեության և ոլորտի բարեփոխումներին ուղղված քաղաքականություններում փոփոխությունների նախագծերի վերաբերյալ:
- Խորհրդի անդամները նախարարությունից «Հանձնարարություններ» ստանան ՏԶ ոլորտին առնչվող բարեփոխումներին աջակցելու վերաբերյալ:
- Խորհրդի անդամները ներկայացնեն իրենց գործունեությունը՝ կապված Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարմանն աջակցության հետ:
- Վերջին ժամանակահատվածում լավ ավանդույթ կա, երբ նյութերը տրամադրվում են էլ. տարբերակով՝ նախապես: Սա շատ կարևոր է, որպեսզի մասնակիցները կարողանան նախապես ծանոթանալ և ներկայացնել առաջարկությունները գրավոր, ինչպես նաև, պատրաստ մասնակցեն նիստերին: Փաստաթղթերը շրջանառվեն առնվազն նիստից 5 օր առաջ:
- Խորհրդի աշխատանքները պարբերական չեն և իրար հաջորդող հանդիպումներում նախորդներում քննարկված հարցերի ընթացքը չի դիտարկվում: Խորհրդի հանդիպումներին ներկայացնել ոչ թե արված աշխատանքը, այլ քննարկել առկա խնդիրները, դրանց լուծման ուղիները:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Հստակ և սպառիչ տեղեկատվություն խորհրդի ձևավորման գործընթացի և ժամանակույցի մասին
2. Հստակ և սպառիչ տեղեկատվություն Խորհրդի կազմի մասին
3. Իրականացրած նիստերի թվի և ժամանակացույցի մասին
4. Ամփոփ տեղեկատվություն օրակարգում քննարկվող հարցերի, ներկայացված առաջարկների, հեղինակների և դրանցից ընդունվածների թվի մասին
5. Ամփոփ տեղեկատվություն նիստերից անհիման բացակա կազմակերպությունների մասին
6. Ամփոփ տեղեկատվություն նիստերի օրակարգի ձևավորմանը մասնակցած կազմակերպությունների մասին
7. Ամփոփ տեղեկատվություն նիստերի ընթացքում ներկայացված առաջարկները միասնական պաշտոնական e_draft.am կայքի ամփոփաթերթում ներգրավված լինելու մասին
8. Ամփոփ տեղեկատվություն ստեղծված աշխատանքային խմբերի և նրանց աշխատանքի արդյունքների մասին
9. Ամփոփ տեղեկատվություն խորհրդի օրակարգում քննարկված ընթացիկ խնդիրների, հեղինակների և դրանց լուծման արդյունքների մասին
10. Ամփոփ տեղեկատվություն նիստերում ընդունված որոշումների կատարման մասին
11. Ամփոփ տեղեկատվություն ռոտացիոն կարգով խորհրդի ընտրությունների գործընթացիի մասին
12. Ամփոփ տեղեկատվություն խորհրդի տարեկան հաշվետվության մշակման գործընթացի և նրանցում խորհրդր անդամների մասնակցության մասին

ՀԱՎԵԼՎԱԾ 6

ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԱՌՎԵԼԻՔ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Նախարարության անվանումը
2. Նիստի օրը և ժամը
3. Նախագահողի անուն ազգանունը, պաշտոնը
4. Նիստի մասնակից խորհրդի անդամների և նախարարության ներկայացուցիչների կազմը
5. Բացակա անդամների կազմը
6. Օրակարգի հարցերը և զեկուցողները
7. Նիստի օրակարգի հաստատման քվեարկության մասին
8. Օրակարգի հարցերի ներկայացում,
9. Հարց ու պատասխանի արձանագրությունը
10. Քննարկումների արձանագրությունը
11. Նիստի կայացված որոշումը

«Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդել» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ և «Արազա» ԲՀԿ կոնսորցիումի կողմից ԵՄ կողմից ֆինանսավորվող “STRONG CSOs” ծրագրի փոքր դրամաշնորհային նախագծի շրջանակներում:

Սույն զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Սույն զեկույցի բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն «Հայաստանի քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդել» ծրագիրը, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

«ՀԿ Կենտրոն» ՔՀՀ ՀԿ
ք. Վանաձոր, Խորենացի 6/1
www.ngoc.am
ngoc.csd.ngo@gmail.com,
info@ngoc.am
(+374) 322 43315, 91 743315

«Արազա» ԲՀԿ
ք. Երևան, Արաբկիր վ/շ,
Կիևյան 7, բն. 94
araza.ngo@gmail.com,
araza@arminco.com
(+374) 10 227, 91743315